



**ՇՐՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՐԱԿԻ, ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՈՒ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵԽՆԻԿԱՅԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**Պատրաստվել է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից՝
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով**



URBAN
FOUNDATION
for human & development

ՈՒՐԲԱՆ
կայուն զարգացման
հիմնադրամ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԳԻՐ..... 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

I. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (Բաղադրիչ 1) 12

1. Նախագծերի որակի գնահատում 12

 Ենթախնդիր 1.1. Համայնքի ներգրավվածությունը նախագծման գործընթացում 12

 Ենթախնդիր 1.2. Համայնքի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի ժամանակին և պատշաճ որակով տրամադրումը..... 13

 Ենթախնդիր 1.3. Նախագծի համապատասխանությունը համայնքի կողմից առաջարկված ծրագրին 13

 Ենթախնդիր 1.4. Նախագծի՝ օրենքով սահմանված փորձաքննության դրական եզրակացության առկայությունը 14

 Ենթախնդիր 1.5. Նախագծերի թերությունները (ինչով են դրանք պայմանավորված) 14

 Ենթախնդիր 1.6. Շինարարության ընթացքում նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխությունների հիմնական պատճառները..... 14

 Ենթախնդիր 1.7. Հեղինակային հսկողության հետ կապված խնդիրներ 15

2. Շինարարական աշխատանքների իրականացման որակի գնահատում 16

 Ենթախնդիր 2.1. Համայնքի մասնակցությունը շինաշխատանքների վերահսկման գործընթացում 16

 Ենթախնդիր 2.2. Շինաշխատանքների համապատասխանությունը նախագծին և գործող շիննորմերին 16

 Ենթախնդիր 2.3. Նախագծային լուծումների և շիննյութերի ընտրության ազդեցությունը աշխատանքների որակի վրա..... 17

 Ենթախնդիր 2.4. Շինաշխատանքների որակը, հիմնական թերությունները և դրանց պատճառները 17

 Ենթախնդիր 2.5. Շահագործման ընթացքում առաջացած խնդիրները 27

 Ենթախնդիր 2.6. Շինաշխատանքների ավարտման ժամկետների հետաձգման հիմնական պատճառները 27

 Ենթախնդիր 2.7. Շինաշխատանքների ընթացքում տեխնիկական հետ կապված խնդիրները 28

 Ենթախնդիր 2.8. Ետավարտական երաշխիքային ժամկետում ի հայտ եկած թերությունների պատշաճ վերացումը կապալառուի կողմից..... 28

3. Ենթակառուցվածքների պահպանվածությունը 28

 Ենթախնդիր 3.1. Ենթակառուցվածքների պահպանվածության ներկա աստիճանը 28

Ենթախնդիր 3.2. Պահպանման և շահագործման ծախսերի համապատասխանությունը նախնական պլանին	30
Ենթախնդիր 3.3. Նախագծի և շինաշխատանքների թերությունների ազդեցությունը ենթակառուցվածքների պահպանման վրա.....	Error! Bookmark not defined.
4. Շինաշխատանքների ծախսերի գնահատում.....	31
Ենթախնդիր 4.1. Նախահաշիվներում շինաշխատանքների, նյութերի և սարքավորումների գնագոյացման մեխանիզմները	32
Ենթախնդիր 4.2. Հիմնադրամի և այլ կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացված շինաշխատանքների աժեքների համեմատություն	36
II. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ (Բաղադրիչ 2)	43
5. Տրամադրված տեխնիկական միջոցների գնահատում	43
5.1 Միավորված համայնքներին տրամադրված տեխնիկայի վիճակը և պահպանման պայմանները... 44	
5.2 Նպատակային և տեխնիկական փաստաթղթերին համապատասխան շահագործում	44
5.3 Շահագործման համապատասխանությունը տվյալ մեխանիզմի տեխնիկական փաստաթղթերին 45	
5.4. Երաշխիքային և արտաերաշխիքային սպասարկում.....	45
5.5. Հաշվառում համայնքի գույքացուցակում.....	46
5.6. Սպասարկող անձնակազմի որակավորումը	46
5.7. Տեխնիկայի համապատասխանությունը համայնքի տրամադրած մասնագրերին	46
5.8. Տեխնիկական վարձույթով տրամադրելու պայմանները.....	47
5.9.Շահագործման ու պահպանման փաստացի ծախսերը	47
III. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	49
Եզրակացություններ	49
Առաջարկներ	50
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բաղադրիչ 2-ի ներքո ուսումնասիրված ծրագրերի տվյալներ	53
ՀԱՎԵԼՎԱԾ 2 Ուղեշարեր	55

ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աղյուսակ 1. Ըստ շինաշխատանքների որակի գնահատված ծրագրերի թիվը (ամփոփ)
- Աղյուսակ 2. Շինաշխատանքի որակի ու պահպանվածության կապը
- Աղյուսակ 3. Ընտրված ծրագրերի բաշխվածությունն ըստ աշխարհագրության և տեսակների
- Աղյուսակ 4. Բաղադրիչ 1-ի ներքո ուսումնասիրված ծրագրերը
- Աղյուսակ 5. Բաղադրիչ 2-ի ներքո ուսումնասիրված ծրագրերը
- Աղյուսակ 6. Խնդիրներ և ենթախնդիրներ (հարցեր)
- Աղյուսակ 7. Հարցվող ներկայացուցիչների և հարցերի շրջանակը
- Աղյուսակ 8. Շինաշխատանքների որակը, հիմնական թերություններն ու դրանց պատճառները
- Աղյուսակ 9. Շահագործման ընթացքում առաջացած խնդիրները
- Աղյուսակ 10. Հետաձգման պատճառները
- Աղյուսակ 11. Ենթակառուցվածքների պահպանվածության գնահատում
- Աղյուսակ 12. Ենթակառուցվածքների պահպանվածության տոկոսային հարաբերությունը
- Աղյուսակ 13. Շահագործման ու պահպանության պլանավորված ու փաստացի կատարված ծախսերը
- Աղյուսակ 14. ՀՀ-ում գործող և ՀՏԼԶ-ում ընդունված ծախսերի (%) համեմատություն
- Աղյուսակ 15.1 Կրասարի դպրոցի շենքի (ՀՏԶ) և Արմավիրի մարզի Զրառատ համայնքի ծանրամարտի դպրոցի կառուցման (ՀՀ քաղշին կոնիտե) արժեքների համեմատություն
- Աղյուսակ 15.2 Կրասարի դպրոցի շենքի (ՀՏԶ) և Գյումրու «Վարդուհի» արվեստի դպրոցի կառուցում (Օյունջյան հիմնադրամ) մեկ մ² արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն
- Աղյուսակ 16.1 Գյուլագարակի մանկապարտեզի (ՀՏԶ) և Ստեփանակերտի մանկապարտեզի (ԱՀ քաղշին կոմիտե) կառուցում
- Աղյուսակ 16.2 Գյուլագարակի մանկապարտեզի (ՀՏԶ) և Ստեփանակերտի մանկապարտեզի (ԱՀ քաղշին կոմիտե) մեկ մ²-ի արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն
- Աղյուսակ 17.1 Գյուլագարակի մանկապարտեզի տանիքի (ՀՏԶ) և Մարտունի քաղաքի բնակելի շենքի տանիքի կառուցում (Գեղարքունիքի մարզպետարան)
- Աղյուսակ 17.2 Գյուլագարակի մանկապարտեզի (ՀՏԶ) և Մարտունի քաղաքի բնակելի շենքի տանիքի կառուցման (Գեղարքունիքի մարզպետարան) մեկ մ²-ի արժեքի և անուղղակի ծախսերի համեմատություն
- Աղյուսակ 18.1 Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչի և ջրատարի կառուցում (ՀՏԶ) և Գավառի նոր այգիների ռոռզման համակարգի կառուցում (Գեղարքունիքի մարզպետարան)
- Աղյուսակ 18.2 Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչի և ջրատարի կառուցում (ՀՏԶ) և Գավառի նոր այգիների ռոռզման համակարգի (Գեղարքունիքի մարզպետարան) մեկ գծամետրի արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն
- Աղյուսակ 19.1 Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿԶ հատված (ՀՏԶ) և Մառնաղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում, ՕԿԶ հատված (Շիրակի մարզպետարան)
- Աղյուսակ 19.2 Ագարակաձորի խմելու ջրի ՕԿԶ հատվածի (ՀՏԶ) և Շիրակի մարզի Մառնաղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի ՕԿԶ հատվածի մեկ մ³ արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն
- Աղյուսակ 20. Նախահաշվի և փաստացի արժեքի կապը
- Աղյուսակ 21. Տեխնիկայի պահպանման գնահատականը
- Աղյուսակ 22. Տեխնիկայի համապատասխանությունը մասնագրերին
- Աղյուսակ 23. Տեխնիկայի պահպանման փաստացի ծախսերը 2020 թվականին

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏՁ) պատվերով և վերաբերում է Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» (ՄՆՏՁ) ծրագրի շրջանակներում իրականացված միկրո/ենթածրագրերի շինարարական աշխատանքների որակի, ծախսերի և ենթակառուցվածքների, ինչպես նաև համայնքներին տրամադրված տեխնիկայի պահպանման գնահատման արդյունքներին:

Հետազոտությունն իրականացրել է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը (ՈւԿՁ) ՀՏՁ-ի հետ կնքված TCWA-2 պայմանագրի հիման վրա՝ ըստ ՀՏՁ-ի կողմից հաստատված մեթոդաբանության: Ուսումնասիրությունն իրականացվել է ՄՆՏՁ ծրագրի երկու բաղադրիչների ներքո իրականացված 25 ծրագրերի շրջանակում:

Բաղադրիչ 1. Օժանդակություն սոցիալ-տնտեսական զարգացմանը և կարողությունների զարգացմանը տեղական մակարդակով – 20 ծրագիր,

Բաղադրիչ 2. Օժանդակություն միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացման նախաձեռնություններին – 5 ծրագիր:

Հետազոտության նպատակն է գնահատել ՀՏՁ կողմից իրականացվող ՄՆՏՁ Ծրագրի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների որակը, ծախսերը, վերականգնված կամ նորովի կառուցված ենթակառուցվածքների և համայնքներին տրամադրված տեխնիկայի պահպանվածությունը: Հետազոտությունն ամփոփում է հետևյալ ոլորտներում (խնդիրներ) իրականացված ուսումնասիրության արդյունքները.

1. Նախագծերի որակ
2. Շինարարական աշխատանքների որակ
3. Շինարարական ծախսերի գնահատում
4. Ենթակառուցվածքների պահպանություն
5. Համայնքներին տրված տեխնիկայի պահպանություն:

Յուրաքանչյուր ոլորտ (խնդիր) գնահատվել է մի շարք հարցերի (ենթախնդիրների) վերաբերյալ ստացված տեղեկությունների հիման վրա՝ նախագծանախահաշվային, շինարարական փաստաթղթերի ուսումնասիրության, ենթակառուցվածքների ֆիզիկական դիտարկման և որակական հարցազրույցների համադրմամբ:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ ՄՆՏՁ Բաղադրիչ 1-ի ներքո գնահատված ծրագրերը իրականացվել են շահառու համայնքների կողմից ներկայացված առաջարկների հիման վրա, ծառայում են նպատակին և կարևոր սոցիալական նշանակություն ունեն համայնքի կյանքում: Համայնքները, ի դեմս Ծրագրի իրականացման կոմիտեների (ՕԻԿ), հիմնականում ակտիվ մասնակցություն են ունեցել բոլոր փուլերում:

Համայնքների մեծ մասը վերակառուցված կամ նորովի կառուցված ենթակառուցվածքների պահպանությանը վերաբերվում է բարձր պատասխանատվությամբ:

Ուսումնասիրված ծրագրերում շինարարական աշխատանքների որակը գնահատվել է 1-4 սանդղակով (որտեղ 1-ը՝ վատ, 4-ը՝ գերազանց) ըստ մեթոդաբանության մեջ սահմանված չափանիշների՝ փորձագետների համատեղ քննարկման արդյունքում՝ լավ ու գերազանց գնահատականների գերակայությամբ (70%):

Աղյուսակ 1. Ըստ շինաշխատանքների որակի գնահատված ծրագրերի թիվը (ամփոփ)

Գերազանց (գնահատական «4»)	Լավ (գնահատական «3»)	Բավարար (գնահատական «2»)	Վատ (գնահատական «1»)
7	7	6	-
35%	35%	30%	-

Դիտարկված ծրագրերի մեծ մասի շինարարական աշխատանքների որակը փոխկապակցված է օգտագործված նյութերի որակի հետ, թեև որակի վրա ազդեցություն են ունեցել նաև շինարարական, տեխնիկական իրականացնող կազմակերպությունների, մասամբ՝ նախագծողի մասնագիտական կարողությունները, նախագծային լուծումները, ինչը մանրամասն ներկայացված է ուսումնասիրության մեջ: **Աղյուսակ 2-ում** համադրված են շինարարական աշխատանքների ու պահպանվածության գնահատականները: Ուսումնասիրված ծրագրերից 14-ի պարագայում շինաշխատանքների որակի ու պահպանվածության գնահատականները համընկնում են:

Աղյուսակ 2 Շինաշխատանքի որակի ու պահպանվածության կապը

	Տեսակ և անվանում	Կոդ	Շինաշխատանքների որակի գնահատում	Պահպանվածության գնահատում
1.	Փարպիի մանկապարտեզի վերակառուցում	TAN-04	3	4
2.	Օհանավանի մանկապարտեզի վերակառուցում	TAN-03	2	2
3.	Արգավանդի մանկապարտեզի վերակառուցում	TAR-04	2	2
4.	Արարատ գ. մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցում	TAT-06	3	4
5.	Նորաշեն գյուղի ամբուլատորիայի հիմնանորոգում	TAT-01	2	2
6.	Ճամբարակի թ.3 մանկապարտեզի վերակառուցում	TGQ-06	2	2
7.	Արծվանիստի խմելու ջրի արտաքին համակարգի կառուցում	TGQ-11	4	4
8.	Գյուլագարակի մանկապարտեզի կառուցում	TLR-03	4	4
9.	Սպիտակի մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	TLR-11	3	3
10.	Ալավերդու ըմբշամարտի դպրոցի վերակառուցում	TLR-01	3	3
11.	Գյումրու "Արևիկ" մանկապարտեզի վերակառուցում	TSH-12	2	3
12.	Պեմգաշենի երաժշտական դպրոցի կառուցում	TSH-18	4	4
13.	Կրասարի դպրոցի շենքի կառուցում 100 աշակերտի համար	TSH-02	3	3
14.	Գորիսի Սերո Խանգաղյանի տուն-թանգարանի վերակառուցում	TSQ-01	3	3

15.	Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչների և ջրատարի կառուցում	TSQ-04	4	4
16.	Խնձորեսկի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում	TSQ-08	4	4
17.	Պտղավանի դպրոցի 2 մասնաշենքերի վերակառուցում	TTV-09	2	2
18.	Նոյեմբերյանի տարածաշրջանի "Հույսի կամուրջ" գրասենյակի վերակառուցում	TTV-13	3	3
19.	Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՁ-ի կառուցում	TVZ-05	4	4
20.	Ջրվեժ գ. տնամերձ հողամասերի ոռոգման համակարգի կառուցում	TKQ-09	4	4

Բաղադրիչ 2-ի ներքո համայնքներին տրամադրված տեխնիկայի պահպանման գնահատման արդյունքները գոհացուցիչ են և արժանացել են բարձր գնահատականի (1-4 սանդղակով):

Տաշիր	Ապարան	Ծաղկահովիտ	Ախուրյան	Վարդենիս
4	3	3	3	3

Համայնքներին տրված տեխնիկական կարևոր նշանակություն ունի կոմունալ և այլ ծառայությունները միավորված համայնքների բոլոր բնակավայրերի բնակչությանը հասանելի դարձնելու համար: Բոլոր հինգ համայնքներին տեխնիկական տրամադրվել է պահանջված մասնագրերին համապատասխան, դրանք գրանցվել են համայնքային գույքացուցակում: Համայնքները ապահովում են տրամադրված տեխնիկայի անվտանգությունը, շահագործում ըստ նպատակի որակյալ անձնակազմի միջոցով: Նկատված հիմնական թերությունը փակ կայանատեղիների բացակայությունն է դիտարկված համայնքներից չորսում:

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» (ՄՆՏՁ) Ծրագրի շրջանակներում իրականացված միկրո/ենթածրագրերի շինարարական աշխատանքների որակի ու ծախսերի, ենթակառուցվածքների և համայնքներին տրամադրված տեխնիկայի պահպանման գնահատման հետազոտությունն իրականացվել է «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամի կողմից՝ 2020 թ. նոյեմբերի 13-ին մեկնարկված TCWA02 պայմանագրի հիման վրա:

Պատվիրատուի տեխնիկական առաջադրանքով հետազոտությունն իրականացվել է ՄՆՏՁ երկու բաղադրիչների ուղղությամբ՝

Բաղադրիչ 1-ի («Օժանդակություն սոցիալ-տնտեսական զարգացմանը և կարողությունների զարգացմանը տեղական մակարդակով») ներքո իրականացվում են անապահով համայնքների առաջնային կարիքների բավարարմանը միտված միկրոծրագրեր՝ ներառյալ կրթօջախները (մանկապարտեզներ, տարրական, միջնակարգ և հատուկ դպրոցներ), առաջնային առողջապահական հաստատությունները, համայնքային կենտրոնները, ջրամատակարարման և կոյուղու համակարգերը և այլն, ինչպես նաև վերանորոգված ենթակառուցվածքներն ապահովվում են կահույքով և սարքավորումներով:

Բաղադրիչ 2-ը («Օժանդակություն միջհամայնքային սոցիալ-տնտեսական զարգացումների նախաձեռնություններին») փոխկապակցված է համայնքների խոշորացմանն ուղղված տարածքային զարգացման բարեփոխումների հետ: Իրականացվող ենթածրագրերը ուղղված են խոշորացված համայնքներում սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքի և համապատասխան ծառայությունների զարգացմանը:

Տեխնիկական առաջադրանքի պայմաններով սահմանվել է ուսումնասիրել 25 ծրագիր, 20-ը Բաղադրիչ 1-ի, 5-ը Բաղադրիչ 2-ի ներքո, որոնք ընտրվել են ՀՏՁՀ կողմից տրամադրված իրականացված ծրագրերի ցանկից՝ ապահովելով համապատասխանությունը հետևյալ չափանիշներին.

- Ծրագրերն իրականացվել են վերջին 5 տարիների ընթացքում.
- Ծրագրերն աշխարհագրորեն հնարավորինս համաչափ են բաշխված Հայաստանի 10 մարզերի ընդգրկմամբ.
- Ապահովվել է ծրագրերի բազմազանությունն ըստ տեսակների:

Նշված չափանիշների հիման վրա ուսումնասիրության համար հետազոտողի կողմից ընտրված ծրագրերը ներկայացված են Աղյուսակ 3- ում՝ տրոհված ըստ աշխարհագրական բաշխվածության և տեսակի:

Աղյուսակ 3. Ընտրված ծրագրերի բաշխվածությունը ըստ աշխարհագրության և տեսակների

Մարզ	Ամբողջ տորիա	Դպրոց	Մանկապարտեզ	Մասնագիտ. դպրոց	Խմելու ջրագիծ	Ռոման ջրագիծ	Համայնքային կենտրոն	Ընդամենը
Արարատ	1		1					2

Արագածոտն			2					2
Արմավիր			1					1
Շիրակ		1	1	1				3
Լոռի			1	1			1	3
Տավուշ		1					1	2
Գեղարքունիք			1		1			2
Վայոց Ձոր					1			1
Կոտայք						1		1
Սյունիք					2		1	3
ԸՆԴԱՄԵՆԸ	1	2	7	2	4	1	3	20

Ըստ նշված չափանիշների ուսումնասիրության համար ընտրվել են հետևյալ ծրագրերը.

Աղյուսակ 4. Բաղադրիչ 1-ի ներքո ուսումնասիրված ծրագրերը

	Մարզ/ Համայնք	Տեսակ և անվանում	Կոդ
1.	Արագածոտն, Փարպի	Փարպիի մանկապարտեզի վերակառուցում	TAN-04
2.	Արագածոտն, Օհանավան	Օհանավանի մանկապարտեզի վերակառուցում	TAN-03
3.	Արմավիր, Արգավանդ	Արգավանդի մանկապարտեզի վերակառուցում	TAR-04
4.	Արարատ, գ. Արարատ	Արարատ գ. մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցում	TAT-06
5.	Արարատ, Նորաշեն	Նորաշեն գյուղի ամբուլատորիայի հիմնանորոգում	TAT-01
6.	Գեղարքունիք, Ճամբարակ	Ճամբարակի թ.3 մանկապարտեզի վերակառուցում	TGQ-06
7.	Գեղարքունիք, Արծվանիստ	Արծվանիստի խմելու ջրի արտաքին համակարգի կառուցում	TGQ-11
8.	Լոռի, Գյուլագարակ	Գյուլագարակի մանկապարտեզի կառուցում	TLR-03
9.	Լոռի, Սպիտակ	Սպիտակի մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	TLR-11
10.	Լոռի, Այավերդի	Այավերդու ըմբշամարտի դպրոցի վերակառուցում	TLR-01
11.	Շիրակ, Գյումրի	Գյումրու "Արևիկ" մանկապարտեզի վերակառուցում	TSH-12
12.	Շիրակ, Պենգաշեն	Պենգաշենի երաժշտական դպրոցի կառուցում	TSH-18
13.	Շիրակ, Կրասար	Կրասարի դպրոցի շենքի կառուցում 100 աշակերտի համար	TSH-02
14.	Սյունիք, Գորիս	Գորիսի Սերո Խանգաղյանի տուն-թանգարանի վերակառուցում	TSQ-01
15.	Սյունիք, Ախլաթյան	Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչների և ջրատարի կառուցում	TSQ-04
16.	Սյունիք, Խնձորեսկ	Խնձորեսկի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում	TSQ-08
17.	Տավուշ, Պտղավան	Պտղավանի դպրոցի 2 մասնաշենքերի վերակառուցում	TTV-09
18.	Տավուշ, Նոյեմբերյան	Նոյեմբերյանի տարածաշրջանի "Հուլիսի կամուրջ" գրասենյակի վերակառուցում	TTV-13
19.	Վայոց Ձոր, Ագարակաձոր	Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՋ-ի կառուցում	TVZ-05
20.	Կոտայք, Ջրվեժ	Ջրվեժ գ. տնամերձ հողամասերի ոռոգման համակարգի կառուցում	TKQ-09

Բաղադրիչ 2-ի ներքո դիտարկվել են հետևյալ ծրագրերը¹.

Աղյուսակ 5. Բաղադրիչ 2-ի ներքո ուսումնասիրված ծրագրերը

	Մարզ/ համայնք	Անվանում և տրամադրված տեխնիկայի ցուցակ	Կոդ
1.	Արագածոտն, Ապարան	Ապարան խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների, աղբահանության և ճանապարհների սպասարկմանն ուղղված ծրագիր	W-03
2.	Շիրակ, Ախուրյան	Ախուրյան խոշորացված համայնքի տնտեսական միջավայրի բարելավում՝ տեխնիկական վերազինման և ծառայությունների բարելավման միջոցով	W-11
3.	Գեղարքունիք, Վարդենիս	Վարդենիս խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում և ճանապարհների որակյալ սպասարկում՝ տեխնիկական վերազինման միջոցով	W-08
4.	Արագածոտն, Ծաղկահովիտ	Ծաղկահովիտ խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների, ճանապարհների սպասարկման, ջրամատակարարման և ջրահեռացման ապահովման և հասարակական տրանսպորտային համակարգի ձևավորման բարելավում	W-01
5.	Լոռի, Տաշիր	Տաշիր խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում, ճանապարհների սպասարկում	W-13

Հետազոտության նպատակն ու խնդիրները

Հետազոտության նպատակը ՄԼՏԶ-ի շրջանակներում իրականացված միկրո/ենթածրագրերի շինարարական աշխատանքների որակի, ծախսերի և ենթակառուցվածքների, ինչպես նաև համայնքներին տրամադրված տեխնիկայի պահպանման գնահատում իրականացնելն է:

Գնահատում իրականացնելու համար պատվիրատուի կողմից առաջադրվել են հետևյալ 5 ոլորտներին առնչվող խնդիրները՝

- 1) Նախագծերի որակի ուսումնասիրություն,
- 2) Շինարարական աշխատանքների որակի գնահատում,
- 3) Շինարարական աշխատանքների ծախսերի գնահատում,
- 4) Ենթակառուցվածքների պահպանման գնահատում,
- 5) Համայնքներին տրված տեխնիկայի պահպանման գնահատում:

Նշված յուրաքանչյուր ոլորտային խնդիր գնահատվել է ըստ մի շարք ցուցանիշների/ենթախնդիրների, որոնց վերաբերյալ ստացված տեղեկությունների հանրագումարը հիմք է հանդիսացել տվյալ ոլորտային խնդրի գնահատման համար:

Աղյուսակ 6. Խնդիրներ և գնահատման ցուցանիշներ

	Խնդիրներ	Ցուցանիշներ/ենթախնդիրներ
1	Նախագծերի որակի ուսումնասիրություն	1.1. Համայնքի ներգրավվածությունը ծրագրերի նախագծման գործընթացում 1.2. Համայնքի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի ժամանակին և պատշաճ տրամադրումը (ելակետային տվյալներ, տեխպայմաններ, այլ): 1.3. Նախագծի համապատասխանությունը համայնքի կողմից առաջարկված ծրագրին

¹ Բաղադրիչ 2-ի ներքո ուսումնասիրված ծրագրերի մանրամասները տե՛ս Հավելված 1-ում

		<p>1.4 Նախագծերի՝ ՀՀ օրենքով նախատեսված փորձաքննության դրական եզրակացության առկայությունը</p> <p>1.5 Նախագծերի թերությունները (ինչով են դրանք պայմանավորված)</p> <p>1.6 Նախագծանախահաշվային փաստաթղթերի, կատարման ժամկետների փոփոխությունների (եթե այդպիսիք եղել են) պատճառները,</p> <p>1.7 Խնդիրներ կապված հեղինակային հսկողության հետ</p>
2.	Շինարարական աշխատանքների իրականացման որակի ուսումնասիրություն	<p>2.1 Համայնքի մասնակցությունը շինարարական աշխատանքների վերահսկման, ընդունման գործընթացներում</p> <p>2.2 Ենթակառուցվածքների շինարարական աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծին և գործող շինարարական նորմերին</p> <p>2.3 Նախագծային լուծումների և շինարարական նյութերի ընտրության ազդեցությունը աշխատանքների որակի վրա</p> <p>2.4 Շինարարական աշխատանքների թերությունները, ինչով են դրանք պայմանավորված</p> <p>2.5 Շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրները և դրանց պատճառները</p> <p>2.6 Շինարարական աշխատանքների ավարտման ժամկետների հետաձգման (եթե եղել է) պատճառները</p> <p>2.7 Շինարարության ընթացքում տեխնիկական հսկողության հետ կապված խնդիրները, տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների՝ նմանատիպ աշխատանքների վերահսկման համար բավարարար որակավորում ունենալու հանգամանքը</p> <p>2.8 Ետավարտական երաշխիքային ժամկետում ի հայտ եկած թերությունների պատշաճ վերացումը կապալառուի կողմից</p>
3	Ենթակառուցվածքների պահպանվածության ուսումնասիրություն	<p>3.1 Ենթակառուցվածքների վիճակը ներկայումս, դրանց պահպանվածությունը</p> <p>3.2 Պահպանման ծախսերի պլանավորումը և դրանց կատարումը, համապատասխանությունը նախնական պլանին</p> <p>3.3 Նախագծի և շինաշխատանքների թերությունների ազդեցությունը պահպանման վրա</p> <p>3.4 Շինաշխատանքներից հետո առաջացած խնդիրները, դրանց պատճառները:</p>
4	Շինարարական աշխատանքների ծախսերի համապատասխան գնահատում	<p>4.1 Շինարարական աշխատանքների, նյութերի և սարքավորումների գնագոյացման մեխանիզմները նախահաշիվներում</p> <p>4.2 Կատարված աշխատանքների արժեքը՝ համանման աշխատանքների միավոր գների համեմատությամբ (օր.՝ 1 քառ. մ –ի արժեքը):</p>
5	Ուսումնասիրել ենթածրագրերի շրջանակում տրամադրված տեխնիկայի պահպանվածությունը	<p>5.1 Տրամադրված տեխնիկայի ներկայիս վիճակը, պահման տարածքը, կիրառվող անվտանգության միջոցառումները</p> <p>5.2 Նպատակային շահագործումը</p> <p>5.3 Մեխանիզմի՝ տեխնիկական փաստաթղթերին համապատասխան շահագործման հիմնավորումը</p> <p>5.4 Երաշխիքային և արտաերաշխիքային սպասարկման իրականացում</p> <p>5.5 Շահագործման ու պահպանման փաստացի ծախսերի համապատասխանությունը նախնական պլանին</p> <p>5.6 Համայնքի գույքացուցակում հաշվառված լինելը, մասնավոր անձանց տրամադրման կարգը, հաստատված գնացուցակի առկայությունը</p> <p>5.7 Սպասարկող անձնակազմի որակավորումը</p> <p>5.8 Տրամադրված տեխնիկայի համապատասխանությունը համայնքի կողմից ներկայացված տեխնիկական մասնագրերին:</p>

Կիրառված մեթոդաբանությունը

Ծրագրերի պահպանվածության գնահատումը իրականացվել է մի քանի մեթոդների համադրմամբ.

- Փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Ենթակառուցվածքների ու տրամադրված տեխնիկայի վիճակի ֆիզիկական դիտարկում ու գնահատում տեղերում,
- Որակական հարցազրույցների անցկացում:

Փաստաթղթերի ուսումնասիրություն. Հետազոտողներն ուսումնասիրել են ՀՏԶ արխիվում պահվող ընտրված ծրագրերի փաստաթղթերը, մասնավորապես այն փաստաթղթերը, որոնք առնչվում են հետազոտական խնդիրներին: Մասնավորապես, ուսումնասիրվել են փորձաքննության նախնական ու վերջնական հաշվետվությունները, ԾԻԿ-երի և ՆԽ-ների ժողովների արձանագրությունները, պայմանագրային նախահաշիվները, վերջին կատարողական հաշվետվությունները, փորձաքննության եզրակացությունները, շահառուի և ՀՏԶ-ի միջև գրագրությունը՝ կապված աշխատանքի ծավալների ու ժամկետների փոփոխությունների հետ, նախագծերը և այլն:

Մի շարք փաստաթղթեր ուսումնասիրվել են նաև դաշտային փուլում, մասնավորապես տրված տեխնիկայի սեփականության վկայականները և տեխնիկական անձնագրերը, ավագանու որոշումները տեխնիկական համայնքի գույքացուցակում ներառելու մասին, վարձակալության պայմանագրերը, հաստատված գնացուցակները, մասնագետների որակավորումը հաստատող փաստաթղթերը, համայնքի կողմից ընթացիկ պահպանման ու սպասարկման ծախսերը հիմնավորող փաստաթղթերը և այլն:

Դիտարկված ու տեղերում գնահատման ժամանակ ուսումնասիրվել են շինաշխատանքների հետ կապված տեսանելի խնդիրները, դրանց պատճառները, գնահատվել է ենթակառուցվածքների պահպանվածությունը:

Որակական հարցազրույցների նպատակը եղել է պարզել համայնքի շահագրգիռ կողմերի կարծիքը ենթակառուցվածքի վերաբերյալ: Հարցազրույցներն անցկացվել են նախապես մշակված ուղեշարերի հիման վրա² և արտացոլել են հետազոտության շրջանակի խնդիրներն ու ենթախնդիրները: Հարցազրույցներ են վարվել ՏԻՄ պաշտոնյաների, ԾԻԿ/ՆԽ անդամի, շահագործողի, շահառուի, նախագծողի, շինարարի ու տեխնիկիչի հետ՝ ըստ ներգրավվածության ու իրավասության:

Շինաշխատանքների որակը գնահատելու համար կիրառվել է 1-4 սանդղակը որտեղ 1-ը՝ վատ, իսկ 4-ը՝ գերազանց գնահատականն է: Այսպես՝

«1» նիշով (վատ) գնահատված են այն շինարարական աշխատանքները, որոնք իրականացվել են բավականին վատ, առկա են բազմաթիվ էական թերություններ՝ այդ թվում անորակ նյութերի, սարքերի (դռների բռնակներ, ծխնիներ), շինվածքների (դռներ, լուսամուտներ) և ինժեներական ցանցերի վիճակի պատճառով, որոնց վերացնելու համար անհրաժեշտ են զգալի միջոցներ, իսկ շահագործումը խնդրահարույց է:

«2» Նիշով (բավարար) գնահատված են այն աշխատանքները, որոնք իրականացվել են բավարար մակարդակով, առկա թերությունները, թեև լուրջ են և բազմաթիվ, սակայն մեծ մասամբ վերաբերում են ներքին ու արտաքին հարդարման, բարեկարգման աշխատանքների որակին կամ օգտագործված նյութերի ու սարքավորումների որակին: Բացահայտված թերությունները հնարավոր է վերացնել լրացուցիչ միջոցների ներդրման դեպքում: Այդ ամենով հանդերձ, ենթակառուցվածքը հնարավոր է շահագործել:

² Հարցազրույցների ուղեշարերը գետեղված են Հավելված 2-ում

«3» նիշով (լավ) գնահատված են ներքին կամ արտաքին հարդարման, բարեկարգման կամ նյութերի հետ կապված մի քանի ոչ էական թերություններ ունեցող ենթակառուցվածքները, որոնք հնթացս հնարավոր է վերացնել պատշաճ պահպանության պարագայում և, որոնք լրջորեն չեն խոչընդոտում օբյեկտի ընթացիկ շահագործմանը:

«4» նիշով (գերազանց) գնահատված են հետազոտման պահին որևէ թերություն չունեցող օբյեկտները:

Աղյուսակ 7. Հարցվող ներկայացուցիչների և հարցերի շրջանակը

Հարցվող անձիք	Հարցերի շրջանակ				
	Նախագծերի որակի վերաբերյալ	Շին. աշխատանքների որակի վերաբերյալ	Ծախսերի համապատասխանության վերաբերյալ	Ենթակառուցվածքների պահպանության վերաբերյալ	Տեխնիկայի պահպանման վերաբերյալ
ՏԻՄ իրավասու պաշտոնյա	✓	✓	✓	✓	✓
ԾԻԿ/ՆԻՆ նախագահ կամ տեղակալ	✓	✓	✓	✓	✓
Ենթակառուցվածքի ղեկավար	✓	✓	✓	✓	✓
Ենթակառուցվածքի շահառու	✓	✓		✓	✓
Նախագծող կազմակերպության ներկայացուցիչ	✓	✓			
Շինարարական կազմակերպության ներկայացուցիչ	✓	✓	✓	✓	
Տեխնիկոլոգիայի իրականացնող կազմակերպության ներկայացուցիչ	✓	✓			

I. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (Բաղադրիչ 1)

1. Նախագծերի որակի գնահատում

Հետազոտական խնդիր «Նախագծերի որակը» գնահատելու համար դիտարկվել են ծրագրային փաստաթղթերը, ինչպես նաև անցկացվել են հարցազրույցներ շահառուների հետ:

Ենթախնդիր 1.1. Համայնքի ներգրավվածությունը նախագծման գործընթացում:

Դիտարկված ծրագրերի մեծ մասի դեպքում համայնքի ղեկավարը և ԾԻԿ-ի ներկայացուցիչները նշում են, որ համայնքը ակտիվորեն ներգրավված է եղել նախագծման փուլում, նախագծողին ներկայացրել են տվյալ ենթակառուցվածքին անհրաժեշտ լուծումները: Օրինակ՝ Նոյեմբերյանի «Հուլիսի կամուրջ» կենտրոնի առաջարկները նախագծողը հաշվի է առել հատուկ կարիք ունեցող երեխաների համար տարածքը առավել

հարմարավետ դարձնելու համար: Կրասարի դպրոցի դեպքում ԾԻԿ-ը մասնակցել է տանիքի կառուցվածքի նախագծային լուծումների քննարկմանը: Որոշ դեպքերում հստակ տեղեկություններ չի հաջողվել ստանալ նախագծման փուլում համայնքի ներգրավվածության վերաբերյալ: Դա հիմնականում այն համայնքներում է, որտեղ ՏԻՄ ընտրությունների արդյունքում տեղի է ունեցել համայնքի ղեկավարի ու ավագանու փոփոխություն, և քաղաքական իրավիճակի փոփոխության հետևանքով չի կատարվել տեղեկատվության բնականոն փոխանցում նոր ղեկավարությանը: Նման դեպքերում ԾԻԿ-ի ներկայացուցիչներին գտնելը և զրուցելը հետազոտողների համար որոշակի դժվարություններ է առաջացրել: Օրինակ՝ Օհանավանի ծրագրի պարագայում (մանկապարտեզ, TAN-03) նախկին համայնքի ղեկավարից չհաջողվեց ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն համայնքի ներգրավվածության վերաբերյալ այն պատճառաբանությամբ, որ երկար ժամանակ է անցել և մանրամասները մոռացվել են: Նմանատիպ իրավիճակ էր նաև Նորաշենի ծրագրի (TAT-01) առնչությամբ, որտեղ համայնքի ներկայիս ղեկավարությունը չի տիրապետում ծրագրի իրականացման մանրամասներին:

Ենթախնդիր 1.2. Համայնքի կողմից անհրաժեշտ փաստաթղթերի ժամանակին և պատշաճ որակով տրամադրումը:

Դիտարկված բոլոր համայնքները նախագծման համար անհրաժեշտ տեխնիկական պայմանները ինժեներական ցանցերի (ջրամատակարարման, էլեկտրամատակարարման, կեղտաջրերի հեռացման, գազամատակարարման) վերաբերյալ, ըստ համայնքի ղեկավարների, տրամադրվել են ժամանակին: Նախագծողները հարցազրույցների ժամանակ չեն նշել տեխպայմանների վերաբերյալ փաստաթղթերի տրամադրումն ուշացնելու փաստեր, կամ չեն հիշել, որ այդպիսիք եղել են: Ընտրված ծրագրերի ՀՏՁ-ի արխիվում պահվող փաստաթղթերի ուսումնասիրության ժամանակ ի հայտ չեն եկել փաստաթղթեր, որոնք կփաստեին տեխպայմանները ժամանակին չտրամադրելը:

Ելնելով ուսումնասիրված փաստաթղթերից, համայնքի կողմից փաստաթղթերի տրամադրման ժամկետները և որակը հիմնականում ազդեցություն չեն ունեցել նախագծերի փոփոխության վրա՝ բացառությամբ երեք դեպքերի, որոնք փաստաթղթավորված են: Արարատի մանկապարտեզի նախագծումը (TAT 06), որի դեպքում, ըստ համայնքի կողմից տրված տեխնիկական պայմանի, կոյուղին գոյություն ունեցող համակարգին միացնելը ամբողջովին հնարավոր չի եղել իրականացնել, ինչի պատճառով կատարվել է նախագծային փոփոխություն: Կրասարի դպրոցի ջրամատակարարման տեխպայմանը չի համապատասխանել ջրամատակարարման ցանցում առկա ճնշմանը, ինչի պատճառով տեղադրվել է պոմպ: Ալավերդու մարզադպրոցում փոփոխվել է ջրամատակարարման տեխնիկական պայմանը:

Ենթախնդիր 1.3. Նախագծի համապատասխանությունը համայնքի կողմից առաջարկված ծրագրին:

Ծրագրային համայնքների ղեկավարության, ԾԻԿ-երի ներկայացուցիչների միահամուռ կարծիքով Բաղադրիչ 1-ի շրջանակներում դիտարկված բոլոր նախագծերը լիովին համապատասխանում են համայնքի կողմից առաջարկված ծրագրին: Ավելին, հարցվողները բազմաթիվ փաստարկներ ու հիմնավորումներ են բերել, թե ինչու են իրենք նախընտրել տվյալ ծրագիրը՝ շեշտելով նախկինում եղած անմխիթար վիճակը և այն սոցիալական մեծ նշանակությունը, որ ունեցել է ՀՏՁ ներդրումը համայնքի կյանքում: Թեև հետազոտության առաջադրանքի մեջ չէր մտնում վերականգնված ենթակառուցվածքի սոցիալական ազդեցության ուսումնասիրությունը, այնուամենայնիվ, շատ դեպքերում հարցվողները շեշտում էին այն դրական սոցիալական ու տնտեսական նշանակությունը, որ ծրագիրն ունեցել է ողջ համայնքի համար:

Ենթախնդիր 1.4. Նախագծի՝ օրենքով սահմանված փորձաքննության դրական եզրակացության առկայությունը:

Դիտարկված ծրագրերի փաստաթղթային ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր դեպքերում առկա է փորձաքննության դրական եզրակացություն, թեև բոլոր ծրագրերում, նախագծերի փորձաքննության ընթացքում, փորձաքննությունն իրականացնող կազմակերպությունը կատարել է դիտողություններ: Դիտողությունների բնույթը տարբեր է, այդ թվում՝ *կոնստրուկտիվ* (Նոյեմբերյանի Հուլիսի կամուրջ, Ալավերդու մարզադպրոց), *գծագրական մասի վերաբերյալ* (Ալավերդու մարզադպրոց, Նորաշենի ամբուլատորիա, Օհանավանի մանկապարտեզ, Գորիսի համայնքային կենտրոն), *ծավալային բացթողումների և ճշգրտումների հետ կապված* (Նոյեմբերյանի Հուլիսի կամուրջ, Ալավերդու մարզադպրոց, Նորաշենի ամբուլատորիա, Ճամբարակի, Փարպիի մանկապարտեզներ, Գորիսի համայնքային կենտրոն), որոնք ուղղվել են նախագծողի կողմից:

Ենթախնդիր 1.5. Նախագծերի թերությունները (ինչով են դրանք պայմանավորված)

Նախագծերի հիմնական թերությունները, որոնք այս կամ այն չափով առկա են բոլոր ծագրերում, նախագծով իրականացվելիք աշխատանքային ծավալների բացթողումներն են ու դրանց ոչ ճիշտ հաշվարկները: Նախագծային թերություն է նաև շինվածքների, սարքերի և նյութերի (ՄԴՖ-ից ու մետաղապլաստե դոների, լուսամուտների, լուսատուների, բռնակների, կողպեքների, ջրի ծորակների, փականների, ճկախողովակների, զուգարանակոնքերի բաքերի և այլ) ոչ լիարժեք տեխնիկական բնութագրերի և որակական պահանջների նկարագրությունը:

Նման նախագծային թերություններ են առկա, օրինակ՝ Արարատ, Պտղավան, Գյումրի (Արևիկ), Ճամբարակ, Նորաշեն համայնքներում իրականացված ծրագրերում:

Փորձագետների մասնագիտական փորձը ցույց է տալիս, որ սովորաբար նման թերությունները պայմանավորված են ոչ մանրակրկիտ ուսումնասիրությամբ և չափազանց քանի որ դրանք նախագծողի համար որևէ հետևանք չեն ունենում: Որպես սուբյեկտիվ պատճառ կարող է լինել տվյալ նախագծի վրա աշխատող մասնագետների ոչ թիմային աշխատանքը, ինչպես նաև նախագծային կազմակերպության ծանրաբեռնվածությունը:

Ենթախնդիր 1.6. Շինարարության ընթացքում նախագծանախահաշվային փաստաթղթերի փոփոխությունների հիմնական պատճառները:

Նախագծողի կողմից նախագծային լուծումների ու ծավալների բացթողումներ առկա են համարյա բոլոր ծրագրերում: Շինարարության փուլում բոլոր նախագծերում կատարվել են տարբեր ծավալի փաստաթղթավորված փոփոխություններ, որոնք կարելի է խմբավորել ըստ մի քանի պատճառների.

- ✓ *Կապալառուի և ՕԻԿ-ի առաջարկով* կատարվել է աշխատանքային ծավալների ճշտում կամ փոփոխություն: Օրինակ, ավելացվել է հախճասալիկի շարվածքի բարձրությունը (Արարատի մանկապարտեզ), տարածքի ասֆալտապատման աշխատանքներում ավելացվել է խճի ներքնաշերտը (Օհանավանի մանկապարտեզ), ասֆալտաբետոնը փոխարինվել է փշրաքարով (Նոյեմբերյանի Հուլիսի կամուրջ, Արգավանդի մանկապարտեզ), տանիքում տեղադրվել են ձնարգելիչներ, կատարվել է ճոռերի և ջրահեռացման խողովակների էլեկտրատաքացում (Սպիտակի մշակույթի տուն), առաստաղի գաջե սվաղը փոխարինվել է գիպսաստվարաթղթե

առաստաղով, տարածքի ցանցավոր ցանկապատը փոխարինվել է մետաղական ցանկապատով (Ճամբարակի և Արգավանդի մանկապարտեզներ),

- ✓ *Թաքնված աշխատանքների ի հայտ գալու պատճառով*, մասնավորապես քանդման աշխատանքների ժամանակ փոփոխվել է հիմքերի նախագիծը՝ կապված սյունակալների նիշերի հետ (Կրասարի դպրոց), շինարարության ընթացքում բացահայտվել է պատերի խարխուլ վիճակը (Նոյեմբերյանի Հուլիսի կամուրջ կենտրոն): Ալավերդու մարզադպրոցի դեպքում պարզվել է, որ ծածկի սալերը մոնտաժված են շեղումով, փոփոխվել է ջրամատակարարման տեխնիկական պայմանը:
- ✓ *Վերջնական չափագրումների արդյունքում իրականացված ճշտումների պատճառով* կատարված նախագծերի փոփոխությունները առկա են բոլոր ծրագրերում, ինչի հետևանքով որոշ դեպքերում նախահաշվի արժեքը նվազել է, օրինակ՝ Գյումրու «Արևիկ» մանկապարտեզի վերակառուցման ծրագրում: Ճամբարակի մանկապարտեզի առաստաղի սվաղը գիպսաստվարաթղթով փոփոխելը ևս հանգեցրել է նախագծային արժեքի նվազման:
- ✓ *ԾԻԿ-ի կողմից նախագծային լուծումների նոր առաջարկների պատճառով*, ինչպես օրինակ՝ Ագարակաձորի ջրամատակարարման ծրագրի դեպքում, երբ առաջարկվել է չկառուցել մարիչ հոր, որը ճնշման անկման ժամանակ կարող է որոշ տներում ջրազրկման պատճառ դառնալ : Տնտեսված միջոցներով հնարավոր է եղել կառուցել լրացուցիչ 90 մ ներքին ցանց:
- ✓ *Տեխնիկական պայմանների փոփոխության պատճառով*, օրինակ՝ Արարատի մանկապարտեզի կոյուղու, Կրասարի դպրոցի ջրամատակարարման, Ալավերդու մարզադպրոցի ջրամատակարարման տեխպայմանների փոփոխության հետևանքով տեղի է ունեցել նախագծերի փոփոխություն:

Նշված փոփոխությունները համաձայնեցվել են պատվիրատուի հետ, փաստաթղթավորված են, չեն հանգեցրել նախահաշվային արժեքի ավելացման, իսկ, որոշ ճշգրտումների արդյունքում, բերել են նախահաշվային արժեքի նվազման:

Ինչ վերաբերում է նախագծերի կատարման ժամկետներին, ապա ուսումնասիրված փաստաթղթերից կարելի է դատել, որ նախագծերի ճնշող մեծամասնության դեպքում ժամկետների էական փոփոխություն տեղի չի ունեցել: Միայն մեկ դեպքում է առկա գրություն Արարատ գյուղի մանկապարտեզի վերակառուցման նախագծի հեղինակի կողմից, որով վերջինս խնդրում է երկարաձգել նախագծման ժամկետը՝ ՀՏՁՀ-ի պահանջով կատարված լրացուցիչ փորձաքննության արդյունքների հիման վրա նախագծում փոփոխություններ կատարելու համար:

Ենթախնդիր 1.7. Հեղինակային հսկողության հետ կապված խնդիրներ:

Ուսումնասիրված ծրագրերի նախագծերի հեղինակների, կապալառուների և տեխնիկայի հետ հարցումների արդյունքում պարզվել է, որ հեղինակային հսկողության հետ կապված խնդիրներ չեն առաջացել, շինարարության ընթացքում համաձայնացվել և լուծվել են առաջարկված և առաջացած հարցերը:

2. Շինարարական աշխատանքների իրականացման որակի գնահատում

Ենթախնդիր 2.1. Համայնքի մասնակցությունը շինաշխատանքների վերահսկման գործընթացում:

Ըստ բանավոր հաղորդումների, ուսումնասիրված բոլոր ծրագրերի շինաշխատանքների վերահսկմանը համայնքը շահագրգիռ մասնակցություն է ցուցաբերել, ԾԻԿ անդամները մշտապես ներկա են եղել և հետևել աշխատանքների ընթացքին, համայնքի ջանքերով ծագած խնդիրներին տրվել են արագ լուծումներ, տեղի մասնագետները և վարպետները ներգրավված են եղել շինաշխատանքներում: Այդուհանդերձ, առկա փաստաթղթերում այս ամենի մասին որևէ արձանագրում չկա: Նշվածը վերապահումով է վերաբերում Ճամբարակի մանկապարտեզի վերակառուցմանը, որի շինարարության ընթացքում ԾԻԿ-ի նախագահը անտարբերություն է հանդես բերել, համայնքի ու շինարարի հարաբերությունները եղել են լարված՝ աշխատանքի որակից դժգոհությունների պատճառով: Պտղավանի դպրոցի դեպքում, թեև ԾԻԿ-ը և Այրում համայնքի ղեկավարությունը մոտիկից վերահսկել են դպրոցի վերակառուցման ընթացքը, սակայն համայնքի ու շինարարի միջև ևս տարաձայնություններ են եղել կապված աշխատանքների որակի հետ:

Ենթախնդիր 2.2. Շինաշխատանքների համապատասխանությունը նախագծին և գործող շիննորմերին:

Շինաշխատանքները հիմնականում իրականացվել են ըստ նախագծերի և շիննորմերի, սակայն որոշ դեպքերում նկատվել են որոշ անհամապատասխանություններ.

- Պտղավանի դպրոցի երկրորդ մասնաշենքի գլխավոր ճակատի բազալտե լուսամուտագոգերը սխալ են տեղադրված, չեն մտցված լուսամուտի փեղկի տակ, այլ տեղադրված են 2-3սմ հեռու: Որոշ լուսամուտագոգեր պատի հարթության հետ հավասար են, մինչդեռ պետք է դուրս լինեն 30սմ: Այդ հանգույցի լուծումը նախագծում տրված է, սակայն չի կատարվել, ինչը նախագծի ու շիննորմերի խախտում է:
- Նոյեմբերյանի «Հույսի կամուրջ» կենտրոնի արտաքին պատերի սվաղը խիստ անհարթ է ու խորդուբորդ, չնայած արտաքին բարվոք տեսքին: Նախահաշվում ներկայացված աշխատանքը չի համապատասխանում կատարվածին, ինչը շիննորմերի խախտում է:
- Պտղավանի դպրոցի և Արարատի մանկապարտեզի տարածքների ասֆալտապատման աշխատանքների ժամանակ բուսահողը չի հանվել կամ ամբողջությամբ չի հանվել, ինչի պատճառով ասֆալտի շերտի վրա սկսել է խոտածածկույթ առաջանալ:
- Ալավերդու, Պտղավանի, Նորաշենի, Կրասարի, Ճամբարակի ծրագրերում սալվածքի արանքների շաղախի մակնիշը ցածր էինչի պատճառով սկսվել է քայքայվել և սալվածքն ու եզրաքարերը նստվածք են տալիս:
- Ալավերդու, Պտղավանի, Նորաշենի, Կրասարի, Ճամբարակի ծրագրերում գրունտի խտացումը սալվածքի տակ անհրաժեշտ չափով չի կատարվել և չի համապատասխանում շիննորմերին:
- Գյումրիի, Նորաշենի, Կրասարի ծրագրերում մետաղապլաստե լուսամուտների մեծ մասի, ինչպես նաև դռների դեֆորմացիաների պատճառը հնարավոր է շրջանակների մեջ տեղադրված մետաղե պրոֆիլների կամ բացակայությունն է, կամ շիննորմաներին չհամապատասխանող հաստությունը /1,2սմ/:
- Կրասարի դպրոցի մետաղապլաստե լուսամուտների ապակեփաթեթներում առաջանում է կոնդենսատ, որը նույնպես չի համապատասխանում շիննորմերին:

- Արգավանդի մանկապարտեզի տարածքի բազալտե փշրաքարե սալվածքի սխալ թերության պատճառով անձրևաջրերը կուտակվում են մուտքերի մոտ:
- Արգավանդի մանկապարտեզի սանհանգույցների հախճաասալերը որոշ տեղերում պոկվել են: Պատճառը հախճաասալերի համար օգտագործված սոսնձի որակն է:
- Փարպիի մանկապարտեզի առաջին հարկի հատակների շրիշակների երկարությամբ պատերը խոնավանում են տեղ-տեղ մինչև պատուհանագոգերը: Պատճառը՝ ձնհալի և անձրևաջրերի թափանցում են դրսից, գետնախարսխի թասակից, որը չունի համապատասխան թերություն դեպի դուրս, և թասակի սալերի տակ կան դատարկություններ:
- Ճամբարակի մանկապարտեզի արտաքին պատերը տեղ-տեղ խոնավ են: Պատճառը՝ տանիքից ձնհալի և անձրևաջրերի սխալ հեռացումն է:
- Օհանավանի մանկապարտեզի ջեռուցման համակարգի ջերմափոխանակիչները որոշ սենյակներում վատ են տաքանում: Շահագործողի կարծիքով խողովակների հանգույցների սխալ գոդման պատճառով ջեռուցման համակարգի խողովակներում առաջացել է խցանում:

Ենթախնդիր 2.3. Նախագծային լուծումների և շինանյութերի ընտրության ազդեցությունը աշխատանքների որակի վրա:

Նախագծային լուծումները հիմնականում չեն ազդել աշխատանքների որակի վրա, ինչը չի կարելի ասել ընտրված նյութերի մասին: Նախագծով նախատեսված նյութերի, պատրաստվածքների և սարքերի մանրամասն նկարագրությունների և բնութագրերի բացակայությունը նախագծերում բացասաբար են ազդել աշխատանքների որակի վրա: Ծրագրերի մեծ մասում դիտարկվել են հետևյալ թերությունները.

- ✓ Վատ որակի և արագ շարքից դուրս եկող դռների բռնակներ, կողպեքներ, ջրի ծորակներ, փականներ, ճկախողովակներ, զուգարանակոնքերի բաքերի սարքեր,
- ✓ ՄԴՖ-ից ներքին դռներ,
- ✓ Մետաղապլաստե լուսամուտներ, դռներ,
- ✓ Պլաստմասե շրիշակներ:

Ենթախնդիր 2.4. Շինաշխատանքների որակը, շահագործման ու պահպանման հիմնական թերությունները և դրանց պատճառները:

Բաղադրիչ 1-ի ներքո դիտարկված բոլոր ծրագրերի շինաշխատանքների որակների վերլուծությունը ներկայացված է ստորև՝ Աղյուսակ 8-ում: Շինաշխատանքների որակը գնահատվել է դաշտային աշխատանքների արդյունքում՝ «վատ-բավարար-լավ-գերազանց» սանդղակով՝ ըստ «Ներածություն» բաժնում նկարագրված չափանիշների, իսկ թերությունների պատճառները խմբավորված են ըստ հետևյալ ուղղությունների՝

- ✓ նախագծային լուծումներ,
- ✓ օգտագործված շինանյութերի որակ,
- ✓ շինարարական աշխատանքի որակ,
- ✓ տեխնիկական որակ,
- ✓ շահագործում ու պահպանում,
- ✓ ժամկետների խախտումներ

Աղյուսակ 8. Շինաշխատանքների որակը, շահագործման ու պահպանման հիմնական թերություններն ու դրանց պատճառները

#	Ծրագրի անվանումը	Կոդ	Շին. որակ	Հիմնական թերությունները	Թերությունների պատճառները						
					Ժամկետների խախտումներ	Նախագծային լուծում	Շինարարական նյութեր և սարքավորումներ	Շին. աշխատանքների որակ	Տեխնիկորոշյան որակ	Շահագործում, պահպանում	
1	Արարատի մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցում	TAT-06	Լավ	Հիմնական թերությունը կապված է ՄՐՖ-ից ներքին դռների հետ, որոնք ցածր որակի են, արագ շարքից դուրս են գալիս և վերականգնել հնարավոր չէ: Ոչ նախագծում, ոչ նախահաշվում ՄՐՖ-ից ներքին դռների վերաբերյալ ոչ մի որակական պահանջ և տեխնիկական բնութագիր չի տրվում:			✓	✓			
				ԸՆԴԱՄԵՆԸ		1	1				
2	Նորաշեն գյուղի ամբուլատորիայի հիմնանորոգում	TAT-01	Բավարար	Մետաղապլաստե լուսամուտները վատ են բացվում-փակվում, ճեղքեր կան, որոշ լուսամուտների բացվող մասերը փականի փակ վիճակում բացվում են, անգամ միջանցիկ քամուց: Կարելի է ենթադրել, շրջանակների մետաղե պրոֆիլները կամ բացակայում են, կամ մասնակի են տեղադրված, կամ նրանց հաստությունը չի համապատասխանում նորմաներին: Համայնքը կարող էր կատարել լուսամուտների կարգաբերումը, որով բավականին կլուծվեր խնդիրը:				✓	✓	✓	✓
				Մի քանի սենյակների պատերի ստորին հատվածներում խոնավության հետքեր կան: Խոնավացել է նաև մանկաբարձական սենյակի լուսամուտի շեյի հատվածը: Խոնավ հատվածներ կան նաև արտաքին պատերի ստորին հատվածներում: Խոնավությունը կարող է կապված լինել հորիզոնական հիդրոմեկուսացման բացակայության և սավաճքի դեֆորմացիայի հետևանքով առաջացած ճեղքերից ջրերի ներթափանցման հետ:	✓			✓	✓		

				Փշրաքարի սալվածքն անորակ է, կան բազմաթիվ ճաքեր: Որոշ հատվածներում սալվածքը նստվածք է տվել և պատերի հետ կցման հատվածներում ճեղքեր են առաջացել, որից պատերը խոնավանում են: Պատճառը բազալտե ջարդոնների շարվածքի շաղախի ցածր մակնիշն ու գրունտի անբավարար խտացումն է:				✓	✓	
				Գլխավոր մուտքի ցանկապատը նախագծով նախատեսված է եղել երեսպատել բազալտե սալերով, սակայն շինարարության ընթացքում, երեսպատումը փոխարինվել է ց/ա սվաղով ու ներկվել է: Ներկայումս ներկը սկսել է քայքայվել ու թափվել: Փոփոխության պատճառը նախահաշվի արժեքի ավելացումից խուսափելն է:				✓	✓	
				ԸՆԴԱՄԵՆԸ	1	1	4	4	1	
3	Սպիտակի մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	TLR-11	Լավ	Երգի սենյակի պատերին, կիսանկուղի երդիկների հատվածում խոնավության և բորբոսի հետքեր կան, մի մասն՝ արդեն չորացած; Ամենայն հավանականությամբ դրանց մի մասը ջեռուցման (լուսամուտների ապակիների վրա առաջացած կոնդենսատի), մի մասը՝ ջրամեկուսացման թերությունների և երդիկների ու պատերի կցվածքների հերմետիկությունը չապահովելու հետևանք են: Արտաքին գազատարը պետք է իրականացնեն համայնքը, որի աշխատանքները ձգձվել են և ջեռուցումը սկսվել է 2020-ի վերջից:	✓			✓	✓	✓
				ԸՆԴԱՄԵՆԸ	1		1	1	1	
4	Ալավերդու ըմբշամարտի դպրոցի վերակառուցում	TLR-01	Լավ	Մարգաղախիճի պատերի վրա ջերմամեկուսացված սալերի հպման հատվածների մեծ մասում հորիզոնական և ուղղահայաց ճաքեր կան:			✓	✓		
				Խոնավության հետքեր են նկատվում դախիճի կողային ճակատի պատի ներքնի հատվածներում: Այդ հատվածում հիդրոմեկուսացում չի իրականացվել:	✓					
				Բազալտե ջարդոնների շարվածքի շաղախի ցածր մակնիշի, ինչպես նաև գրունտի անբավարար խտացման պատճառով փշրաքարի սալվածքի վրա առաջացել են ճաքեր:			✓	✓		
				ԸՆԴԱՄԵՆԸ	1		2	2		

5	Գյումրու «Արևիկ» մանկապարտեզի վերակառուցում	TSH-12	Բավարար	Արտաքին դռները վատ են բացվում-փակվում, դռների փեղկերը շրջանակներին լավ չեն նստում, ճեղքեր կան: Լուսամուտները նույնպես վատ են բացվում-փակվում, ճեղքեր կան, փչում է, որը Գյումրու ցուրտ եղանակային պայմանների հետևանքով լուրջ խնդիրներ է առաջացնում: Լուսամուտների մեծ մասի փեղկերի և շրջանակների արանքները փակված են կպչուն թաղանթով, կան լուսամուտներ, որոնց ճեղքերը, լայն լինելու պատճառով, բամբակով են խցանված: Տպավորությունն է, որ շրջանակները դեֆորմացվում են: Կարելի է ենթադրել՝ շրջանակների մետաղե պրոֆիլները կամ բացակայում են, կամ մասնակի են տեղադրված, կամ նրանց հաստությունը չի համապատասխանում նորմաներին /1.2մմ/: Համայնքը կարող է կատարել լուսամուտների կարգաբերումը, որով բավականին կլուծվի խնդիրը:	✓		✓	✓	✓	✓					
				ՄԴՖ-ի ներքին դռները ցածր որակի են, արագ շարքից դուրս են գալիս:							✓	✓			
				Արտաքին պատերի ներկը մի քանի հատվածներում թափվում է: Ներկը կամ անորակ է, կամ ջրակայուն չէ:								✓	✓	✓	
				ԸՆԴԱՄԵԼ							1	1	3	2	2
6	Կրասարի դպրոցի շենքի կառուցում 100 աշակերտի համար	TSH-02	Լավ	Ընդհանուր առմամբ շինաշխատանքների որակը լավ է, բայց կան թերություններ: Երկրորդ հարկի համարյա բոլոր, նաև առաջին հարկի մի քանի սենյակների առաստաղների գաջը թափվում է, կան խոնավ-բորբոսնած հատվածներ շենքի արտաքին պատերի վերին անկյուններում՝ ջրհորդանների տակ: Մարգադահլիճի առաստաղը, ջեռուցման կաթսաների և ջրի բաքերի սենյակները խոնավանում են, սվաղը թափվում է թե՛ պատերից, թե՛ առաստաղից: Պատճառները. <ul style="list-style-type: none"> Շենքի տանիքը բարդ է, ջարդրտված տարբեր հարթությունների, ինչի հետևանքով առաջանում են թիթեղից բազմաթիվ կցվածքներ, թիթեղի՝ պատերին հարող մասեր, որոնք անորակ են իրականացվել: Ջրահեռացումը իրականացվել է ազատ, հավաքովի և 			✓	✓	✓	✓					

				<p>կախովի ջրհորդաններով, որոնց հատվածներում նույնպես պատերը խոնավանում են: Ձևարգելիչներ չեն նախատեսվել: Ջրհորդանների և ջրահեռացման խողովակների կտրվածքը փոքր է: Ելնելով Կրասարի կլիմայական խիստ պայմաններից, նախագծման փուլում տանիքի ծածկի լուծումները պետք է վերանայվեին:</p> <ul style="list-style-type: none"> Ե/բ ծածկի մակերևույթը շատ ողորկ է ստացվել կաղապարամածի լամինատե տախտակների հետևանքով: Անհրաժեշտ էր բետոնի մակերևույթը մշակել «բետոնակոնտակտով» նախքան սվաղելը: 						
				<p>Կան վատ բացվող-փակվող լուսամուտներ, որոնց ապակեփաթեթները հերմետիկ չեն և ներսից կոնդենսատ է առաջանում: Պատճառը լուսամուտների ցածր որակն է, թեև արտաքին տեսքը լավ է:</p>			✓	✓	✓	✓
				ԸՆԴԱՄԵՆԸ		1	2	2	2	1
7	Պողպվանի դպրոցի 2 մասնաշենքերի վերակառուցում	TTV-09	Բավարար	<p>ՄՂՖ-ից ներքին դռների որակը ցածր է, երեսպատումը արագ վնասվում է և վերականգնել հնարավոր չէ: Դռները ծխնիներից թուլանում ու կախվում են, դռների բռնակները պոկվում են, փականների միջուկները շատ արագ շարքից դուրս են գալիս:</p>		✓	✓			
				<p>Կենտրոնական մասնաշենքում 6 ջեռուցման մարտկոց 2 հատ առաջին հարկում, 4 հատ երկրորդ հարկում, չեն տաքանում: Պատճառը պարզել չհաջողվեց:</p>				✓	✓	
				<p>Վինիլից հատակները շերտատվում են, պոկվում են հիմնատակից: Պատճառը կարող է լինել-ց/ա նախաշերտի մինչև վերջ չշորացնելը, կամ անտրակ սոսինձը:</p>	✓		✓	✓	✓	
				<p>Նախագծում շրիշակները նախատեսված են ՄՂՖ-ից, նախահաշվում նյութը չի նշված: Փաստացի տեղադրված են պլաստմասե շրիշակներ, որոնք շատ արագ ջարդվում են՝ հատկապես դների բացվածքների անկյունային մասերում:</p>			✓	✓	✓	✓

				Ուսումնական մասնաշենքի ետևի ճակատի (Գ առանցք) առաջին հարկի բազալտե լուսամուտագոգերը տեղադրված չեն, պարզապես դրված են լուսամուտագոգի վրա, մեկն ընդհանրապես չկա: Նույն ճակատի լուսամուտագոգերը տարբեր հաստության են: Ակնհայտ է շինաշխատանքի ցածր որակ:				✓	✓	
				Նույն մասնաշենքի գլխավոր ճակատի (Ա առանցք) բազալտե լուսամուտագոգերը սխալ են տեղադրված, լուսամուտագոգը լուսամուտի փեղկերի տակ անցկացված չեն, տեղադրված են փեղկերից 2-3 սմ հեռու և արանքը ց/ա է լցված: Լուսամուտագոգերը պատի հարթության հետ հավասար են մինչդեռ 30 մմ պետք է դուրս գային: Նախագծում այդ հանգույցի լուծումը տրված է: Պատճառը շինաշխատանքի ցածր որակն է:				✓	✓	
				Բազալտե եզրաքարերն ուղղաձիգ չեն շարված, երկու հատվածում բացակայում են (արտաքին գազատարի անցումում և կոմպենսատորի մասում). պատճառը՝ շինաշխատանքի ցածր որակ:				✓	✓	
				Շահագործողը պատշաճ չի իրականացում պահպանումը: Միջանցքների ու դասասենյակների պատերի ստորին հատվածներն ամբողջովին սևացած են երեխաների կոշիկների հետքերից, որոշ տեղերում գիպսակարտոնե տուփերի անկյունները ջարդված են, ներկարարական անկյունակները դուրս են ընկել. նման հատված կա նաև շենքի արտաքին ճակատին:						✓
				ԸՆԴԱՄԵԼ	1	1	3	6	6	2
8	Նոյեմբերյանի տարածաշրջանի «Հուլիսի կամուրջ» կենտրոնի վերակառուցում	TTV-13	Լավ	ՄԴՖ-ից ներքին դռները ցածր որակի են, արագ շարքից դուրս են գալիս և վերականգնել հնարավոր չէ: Ոչ նախագծում, ոչ նախահաշվում ՄԴՖ-ից ներքին դռների վերաբերյալ ոչ մի որակական պահանջ և տեխնիկական բնութագիր առկա չէ: Արտաքին պատերի սվաղն ամբողջությամբ անհարթ է, չնայած արտաքին բարվոք տեսքին, պատված է մազային ձաքերով:	✓		✓		✓	✓
				ԸՆԴԱՄԵԼ	1	1	1	1	1	
9	Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ	TVZ-05	Գերազա	Թերություններ չկան	✓					

Գնացի վերակառուցում, ՕԿՁ-ի կառուցում		նց								
				ԸՆԴԱՄԵՆԸ	1					
10	Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչների և ջրատարի կառուցում	TSQ-04	Գերազանց	Թերություններ չկան						
11	Արգավանդի մանկապարտեզի վերակառուցում	TAR-04	Բավարար	Ձնհալի ջրերը և անձրևաջրերը կուտակվում են մանկապարտեզի գլխավոր ճակատի ամբողջ երկարությամբ, ինչը դժվարացնում է մանկապարտեզ ելումուտը: Պատճառը հարթակի սխալ թեքությունն է:		✓		✓	✓	
				Ձնհալի ժամանակ, ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի պատճառով, առաջին հարկի պատերի ներքին հատվածները շրիշակների երկարությամբ խոնավ են: Մանկապարտեզի շենքը կառուցվել է 20-րդ դարի 50-ական թվականներին, և հիմքերի հորիզոնական ջրամեկուսացում կամ չի իրականացվել, կամ այն տասնյակ տարիների ընթացքում քայքայվել է: Համաձայն նախագծի ինժեներա-երկրաբանական եզրակացության, ստորգետնյա ջրերն ունեն տեղական ճնշում, ուստի հնարավոր են դրանց մակարդակների տատանումներ 0.8-1.0մ սահմաններում:		✓				
				Մանկապարտեզի սանհանգույցների արտաքին պատերի հախճասալերը որոշ տեղերում պոկվել են, իսկ նույն պատերի այլ տեղերում հայտնաբերվել են խոռոչներ: Ներքին պատերի հախճասալված մակերեսները լավ վիճակում են: Հավանական պատճառը օգտագործվել է ոչ համապատասխանող սոսինձ:			✓	✓	✓	
				ԸՆԴԱՄԵՆԸ		2	1	2	2	
12	Արծվանիստի խմելու ջրի արտաքին համակարգի կառուցում	TGQ-11	Գերազանց	Թերություններ չկան						

13	Ճամբարակի թիվ 3 Մանկապարտեզի վերակառուցում	TGQ-06	Բավարար	Մանկապարտեզի մասնաշենքերի շուրջը և մանկական հրապարակի բազալտե փշրաքարե սալվածքը քայքայվում է, եզրագարդի բետոնե քարերը շարժվում և տեղից դուրս են ընկնում: Պատճառը բազալտե ջարդոնների շարվածքի շաղախի ցածր մակնիշը, գրունտի անբավարար խտացումն է:				✓	✓		
				Տանիքի և հովհարների ձևի և անձրևաջրերի սխալ հեռացման պատճառով արտաքին պատերը տեղ-տեղ խոնավանում են:					✓	✓	
				Գետնախարսի բազալտե սալերը տեղ-տեղ շերտազատվում են շինաշխատանքների ցածր որակի պատճառով:					✓	✓	
				Լուսամուտների արտաքին եզրակալի սվաղը տեղ-տեղ շերտազատվում և թափվում է շինաշխատանքների ցածր որակի պատճառով:					✓	✓	
				Մասնաշենքերի ներքին դռները ցածր որակի պատճառով կախվել են և նորմալ չեն փակվում, շերտավորվում են, բռնակները ջարդվում են:	✓	✓					
				Ներքին պատերը շատ տեղերում խոնավ են, ներկը բորբոսնում, թափվում է: Պատճառը՝ ջրի մաղումն է խողովակների միացման հանգույցներից: Խողովակների հանգույցներն իրականացված են անորակ:					✓	✓	
				Տանիքի վրա տեղադրված արևային ջրատաքացման համակարգի պանելների մի մասն ընկել է հենարաններից: Պատճառը՝ հենարանների միացման հանգույցներում աշխատանքների անորակ կատարումն է:					✓	✓	
				Հակահրդեհային ձայնային ազդանշանման համակարգը չի աշխատում: Պատճառը՝ աշխատանքների ցածր որակ:							✓
				ԸՆԴԱՄԵՆԸ					1	1	6
14	Ս. Խանգաղյանի տուն թանգարանի վերակառուցում	TSQ-01	Լավ	Տուն -թանգարանը շահագործման հանձնելուց հետո չնչին վնասվածքներ են առաջացել: Պատճառը կառույցը ձմռանը չջեռուցելն է:						✓	
				ԸՆԴԱՄԵՆԸ							1
15	Գյուլագարակի մանկապարտեզի վերակառուցում	TLR-03	Գերազանց	Թերություններ չկան							

16	Ջրվեժ գյուղի ոռոգման համակարգի կառուցում	TGQ-09	Գերազանց	Թերություններ չկան						
17	Խնձորենկ գյուղի բաշխիչ ցանցի վերակառուցում	TSQ-08	Գերազանց	Թերություններ չկան						
18	Օհանավանի Մանկապարտեզի վերակառուցում	TAN-03	Բավարար	Պատերի և առաստաղի սվաղի վրա առկա են ճաքեր, որոնք առաջացել են երկրաշարժի հետևանքով (ըստ շինարարի և շահագործողի):						
				Մանկապարտեզի ջեռուցման համակարգի որոշ հատվածներում ջերմափոխանակիչները վատ են տաքանում: Շահագործողի կարծիքով, ջեռուցման համակարգի խողովակներում կա խցանում, որն առաջացել է խողովակների հանգույցների գոդման ժամանակ: Պատճառը՝ աշխատանքների ցածր որակն է:				√	√	√
				Լվացարանների ծորակների ճկափողերը պայթել են, տեղի է ունեցել ջրի հոսք, ինչի հետևանքով խոնավացել է պատերի մեծ մակերես: Պատճառը՝ ձմռանը մանկապարտեզը չի գործել, ջուրը չի դատարկվել համակարգից, ջուրը սառել է և դրա հետևանքով ճկափողերը պայթել են:						
ԸՆԴԱՄԵՆԸ								1	1	2
19	Պեմգաշենի երաժշտական դպրոցի կառուցում	TSH-18	Գերազանց	Թերություններ չկան						
20	Փարպիի մանկապարտեզի վերակառուցում	TAN-04	Լավ	Առաջին հարկի հատակների շրիշակների երկարությամբ պատերը խոնավանում են 20 սմ-ից մինչև պատուհանանցոգերը: Պատճառը՝ գետնախարսխի թասակից խոնավությունը թափանցումն է, քանի որ այն չունի համապատասխան թեքություն:		√		√	√	
				ԸՆԴԱՄԵՆԸ		1	1	1		
Արձանագրված բոլոր թերությունների պատճառների տոկոսային հարաբերությունը						10,2 %	14,8 %	31,8 %	31,8 %	11,4 %

Այսպիսով, արձանագրված բոլոր թերությունների պատճառների տոկոսային հարաբերությունը հետևյալն է.

- Նախագծային թերություններ – 10.2 %
- Շինանյութի որակի հետ կապված թերություններ – 14.8%
- Շինաշխատանքների հետ կապված թերություններ – 31.8%
- Տեխնոլոգիայի թերություններ – 31.8%
- Շահագործման, պահպանության հետ կապված թերություններ – 11.4%

Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշված տոկոսները ներկայացնում են ոչ թե ուսումնասիրված 20 ծրագրերի շրջանակում նշված թերությունների հարաբերությունը (ինչպես ներկայացված է «Ներածություն» բաժնում), այլ այդ ծրագրերում բացահայտված բոլոր թերությունների (յուրաքանչյուր ծրագրում կարող է լինել 1 կամ մի քանիսը) հանրագումարի տոկոսային արժեքը:

Ենթախնդիր 2.5. Շահագործման ընթացքում առաջացած խնդիրները:

Նախորդ գլուխներում ներկայացված նախագծերին, շինաշխատանքների որակին, շիննորմերին վերաբերող խնդիրներն ու բացթողումները ակնառու են դառնում շահագործման ընթացքում, ընդ որում, որքան ենթակառուցվածքը երկար է շահագործվում, այնքան խնդիրներն ավելի սրությամբ են դրսևորվում: Դիտարկված ենթակառուցվածքներում շահագործման ընթացքում առաջացած խնդիրները կարելի է բաժանել մի քանի խմբի, որոնք ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Շահագործման ընթացքում առաջացած խնդիրները

Խնդիրը	Պատճառը	Որ ծրագրերում է դրսևորվել
Դռներ (ներքին)	ՄԴՖ դռների ցածր որակ, կողպեքները, բռնակները շատ արագ շարքից դուրս են գալիս:	Նորաշեն, Արարատ, Նոյեմբերյան, Արևիկ, Պողոսյան, Ճամբարակ
Մետաղապլաստե պատրաստվածք	Լուսամուտների մեծ մասի և արտաքին դռների փեղկերը դեֆորմացվում են:	Գյումրի, Նորաշեն, Կրասար, Օհանական
Սալվածք	Աստիճանաբար սկսում է նստվածք տալ, քայքայվել: Պատճառը գրունտի թերի խտացումը, շողախի ցածր մակնիշն է:	Ալավերդի, Պողոսյան, Նորաշեն, Կրասար, Ճամբարակ
Արտաքին պատեր	Ներկված հատվածներում ներկը թափվում, արագ խամրում է: Պատճառը օգտագործված ցածրորակ կամ ոչ ջրակայուն ներկն է:	Նորաշեն, Գյումրի («Արևիկ»)
Հատակ	Վինիլի հատակների շերտատում, հիմնատակից անջատում: Պատճառը կարող է լինել-ց/ա նախաշերտի մինչև վերջ չչորացնելը, կամ անորակ սուսինձը:	Պողոսյան
Խոնավություն	Խոնավության հետքեր բազմաթիվ ծրագրերում՝ մասնավորապես շենքերի առաջին հարկերում: Պատճառը՝ պատերի հորիզոնական հիդրոմեկուսացման բացակայությունը, սալվածքի դեֆորմացիայի հետևանքով առաջացած ճեղքերից ջրերի ներթափանցումը, Կրասարի դեպքում՝ նաև տանիքից ջրի ներհոսքը:	Նորաշեն, Ալավերդի Արգավանդ, Փարպի, Պողոսյան, Գյումրի, Օհանական, Կրասար, Ճամբարակ

Ենթախնդիր 2.6. Շինաշխատանքների ավարտման ժամկետների հետաձգման հիմնական պատճառները:

Դիտարկված ծրագրերի 45%-ի դեպքում շինաշխատանքների ժամկետների հետաձգում տեղի չի ունեցել: Մնացած դեպքերում հետաձգման պատճառները հիմնականում երեքն են՝

- Չնախատեսված աշխատանքներ, նախագծային փոփոխություններ,
- Եղանակային պայմաններ,
- Կապալառուի թերացում:

Աղյուսակ 10-ում ներկայացված են ուսումնասիրված ծրագրերի փաստաթղթերում արձանագրված ժամկետների հետաձգման պատճառներն ըստ հաճախականության և բաշխվածության:

Աղյուսակ 10. Հետաձգման պատճառները

	Հետաձգման պատճառը	Ծրագիր	Դեպքերի քանակը
1	Չնախատեսված աշխատանքներ, ծավալային փոփոխություններ	Գորիս, Օհանական, Պողոսյան	3 (15%)
2	Եղանակային պայմաններ	Մայիտակ, Պեմզաշեն, Ագարակաձոր, Ալավերդի, Գյուլագարակ	5 (25%)
3	Կապալառուի պատճառով	Նորաշեն, Գյումրի, Նոյեմբերյան	3 (15%)
4	Չի հետաձգվել, կամ ավարտվել է ժամկետից շուտ	Արգավանդ, Փարպի, Ճամբարակ, Խնձորեսկ, Ջրվեժ, Արարատ, Կրասար, Ախլաթյան, Արծվանիստ	9 (45%)

Ենթախնդիր 2.7. Շինաշխատանքների ընթացքում տեխնիկոլոգիայի հետ կապված խնդիրներ:

Համայնքի ներկայացուցիչները, ԾԻԿ-երի անդամները հիմնականում նշում են, որ տեխնիկոլոգիայի հետ կապված խնդիրներ չեն առաջացել: Տեխնիկոլոգիան իրականացնող կազմակերպության ներկայացուցիչները պարբերաբար և հաճախ եղել են շինհրապարակում, համագործակցել են համայնքի ու կապալառուի հետ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ծրագրերում առկա շինաշխատանքների թերությունները կապված են տեխնիկոլոգիայի ոչ պատշաճ իրականացման հետ: Օրինակ՝ Գյումրու «Արևիկ» մանկապարտեզի արտաքին դռների սխալ տեղադրումը, Կրասարի դպրոցի տանիքի ու առաստաղի անբավարար իրականացումը, ինչպես նաև Նորաշենի ամբուլատորիայի ու Ճամբարակի մանկապարտեզի շինաշխատանքներում տեղ գտած բազմաթիվ թերությունները կարելի էր կանխել պատշաճ տեխնիկոլոգիայի դեպքում:

Ենթախնդիր 2.8. Ետավարտական երաշխիքային ժամկետում ի հայտ եկած թերությունների պատշաճ վերացումը կապալառուի կողմից:

Ծրագրերի մեծ մասի դեպքում՝ 70%, համայնքի ներկայացուցիչները և ԾԻԿ-երի անդամները նշում են, որ երաշխիքային ժամկետում թերություններ ի հայտ չեն եկել: Նման պատասխան է գրանցվել նաև Օհանավանի և Նորաշենի ծրագրերի վերաբերյալ, ինչը սակայն պետք է դիտարկել վերապահությամբ: Օհանավանի մանկապարտեզը շահագործման է հանձնվել 2017 թ. սեպտեմբերին, 2018թ. քաղաքական փոփոխությունների պատճառով չի գործել մեկ տարի: Համայնքի նոր ղեկավարի հավաստմամբ այդ ընթացքում արդեն առաջացել էին թերություններ: Ընդամենը չորս ամիս գործելուց հետո մանկապարտեզը կրկին փակվել է արդեն կորոնավիրուսային համաճարակի պատճառով և վերագործարկվել է 2021 թվականի փետրվարից: Իսկ Նորաշենի ամբուլատորիայի շենքի բազմաթիվ թերություններ, աշխատակիցների խոսքերով, ի հայտ են եկել անմիջապես շահագործման հանձնելուց հետո: Կարելի է եզրակացնել, որ երկու դեպքում էլ համայնքի նախկին ղեկավարությունը, քաղաքական զարգացումների արդյունքում զիջելով իշխանությունը՝ պատրաստակամ չի եղել փոխանցել ծրագրին առնչվող ամբողջական տեղեկատվությունը նոր ղեկավարությանը:

Երեք ծրագրի պարագայում երաշխիքային ժամկետում առաջացած փոքր, կոսմետիկ բնույթի թերությունները կապալառուն վերացրել է (Սպիտակ, Կրասար, Ալավերդի): Եվս երեք ծրագրերում ետավարտական փուլում ի հայտ եկած լուրջ թերությունները կապալառուն չի վերացրել կամ վերացրել է մասնակի՝ խնդիրը թողնելով չլուծված: Ենթակառուցվածքի շահագործողների բազմաթիվ դիմումները կապալառուն թողել է անպատասխան: Այդ ծրագրերն են՝ Ճամբարակի մանկապարտեզը, Գյումրու «Արևիկ» մանկապարտեզը և Պտղավանի դպրոցը: Այդ թերությունները մանրամասն նկարագրված են 2.4. կետում:

3. Ենթակառուցվածքների պահպանվածությունը

Ենթախնդիր 3.1. Ենթակառուցվածքների պահպանվածության ներկա աստիճանը:

Մույն հետազոտության մեթոդաբանությամբ սահմանվել է Բաղադրիչ 1-ի ներքո իրականացված ծրագրերի պահպանվածության գնահատում 1-4 սանդղակով, որտեղ 1-ը՝ վատ, 2-ը՝ բավարար, 3-ը՝ լավ, 4-ը՝

գերազանց: Գնահատումն իրականացվել է դաշտային աշխատանքի փուլում կատարված դիտարկումների հիման վրա՝ փորձագետների տեսակետների համադրմամբ: Շատ դեպքերում, սակայն ոչ միշտ, ենթակառուցվածքների պահպանվածությունը շտկապված է շինարարական աշխատանքների որակի հետ: Աղյուսակ 11-ում գնահատված է ենթակառուցվածքների պահպանվածությունը՝ շինարարական աշխատանքների որակի գնահատականի հետ համադրությամբ:

Աղյուսակ 11. Ենթակառուցվածքների պահպանվածության գնահատում

	Տեսակ և անվանում	Կոդ	Պահպանվածության գնահատական	Շինաշխատանքների որակի գնահատական
1.	Փարպիի մանկապարտեզի վերակառուցում	TAN-04	4	3
2.	Օհանավանի մանկապարտեզի վերակառուցում	TAN-03	2	2
3.	Արգավանդի մանկապարտեզի վերակառուցում	TAR-04	2	2
4.	Արարատ գ. մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցում	TAT-06	4	3
5.	Նորաշեն գյուղի ամբուլատորիայի հիմնանորոգում	TAT-01	2	2
6.	Ճամբարակի թ.3 մանկապարտեզի վերակառուցում	TGQ-06	2	2
7.	Արծվանիստի խմելու ջրի արտաքին համակարգի կառուցում	TGQ-11	4	4
8.	Գյուլագարակի մանկապարտեզի կառուցում	TLR-03	4	4
9.	Սպիտակի մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում	TLR-11	3	3
10.	Ալավերդու ըմբշամարտի դպրոցի վերակառուցում	TLR-01	3	2
11.	Գյումրու "Արևիկ" մանկապարտեզի վերակառուցում	TSH-12	3	3
12.	Պեմգաշենի երաժշտական դպրոցի կառուցում	TSH-18	4	4
13.	Կրասարի դպրոցի շենքի կառուցում 100 աշակերտի համար	TSH-02	3	3
14.	Գորիսի Սերո Խանգադյանի տուն-թանգարանի վերակառուցում	TSQ-01	3	3
15.	Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչների և ջրատարի կառուցում	TSQ-04	4	4
16.	Խնձորենկի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում	TSQ-08	4	4
17.	Պտղավանի դպրոցի 2 մասնաշենքերի վերակառուցում	TTV-09	2	2
18.	Նոյեմբերյանի տարածաշրջանի "Հուլիսի կամուրջ" գրասենյակի վերակառուցում	TTV-13	3	3
19.	Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՋ-ի կառուցում	TVZ-05	4	4
20.	Ջրվեժ գ. տնամերձ հողամասերի ոռոգման համակարգի կառուցում	TKQ-09	4	4

«4» գնահատված 9 ենթակառուցվածքների թվում են բոլոր 5 ջրագծերը, ինչպես նաև 3 մանկապարտեզ ու 1 մասնագիտացված դպրոց: 6 ծրագրերի պահպանվածությունը գնահատվել է լավ: Բարվոք չէ Նորաշենի ամբուլատորիայի, Պտղավանի դպրոցի, Ճամբարակի, Օհանավանի ու Արգավանդի մանկապարտեզների պահպանությունը: 17 ծրագրերում պահպանության ու շինաշխատանքների գնահատականները համարնկնում են, ինչը ակնհայտ է դարձնում այդ երկուսի փոխկապակցվածությունը:

Աղյուսակ 12. Ենթակառուցվածքների պահպանվածությունը տոկոսային հարաբերությամբ

Գնահատական	Քանիսն են ստացել	տոկոս
Գերազանց՝ «4»	9	45%
Լավ՝ «3»	6	30%
Բավարար՝ «2»,	5	25%
Վատ՝ «1»	-	-

Ենթախնդիր 3.2. Պահպանման և շահագործման ծախսերի համապատասխանությունը նախնական պլանին:

Ըստ փաստաթղթերի ուսումնասիրության և համայնքներից ստացված տեղեկությունների, պահպանության համար պլանավորված և փաստացի կատարված ծախսերը ներկայացված են ստորև աղյուսակում:

Աղյուսակ 13. Շահագործման ու պահպանության պլանավորված ու փաստացի ծախսերը, դրամով

	Ծրագիր, համայնք	Կոդ	Վերջնական փորձաքննության մեջ նշած ծախսեր	Փաստացի ծախսեր նախորդ տարում	Փորձաքննության մեջ նշված և փաստացի ծախսերի տարբերություն
1	Մանկապարտեզ, Փարպի	TAN-04	23 750 000	16 000 000	7 750 000
2	Մանկապարտեզ, Օհանավան	TAN-03	21 350 000	0	21 350 000
3	Մանկապարտեզ, Արգավանդ	TAR-04	10 500 000	1 440 000	9 060 000
4	Մանկապարտեզ, Արարատ	TAT-06	46 700 000	74 309 326	-27 609 320
5	Ամբուլատորիա, Լորաշեն	TAT-01	16 800 000	18 112 000	-1 486 000
6	Մանկապարտեզ, Ճամբարակ	TGQ-06	23 535 000	18 286 800	5 248 200
7	Զրագիծ, Արծվանիստ	TGQ-11	7 410 000	7 410 000	0
8	Մանկապարտեզ, Գյուլագարակ	TLR-03	13 200 000	11434 092	1 765 908
9	Համայնքային կենտրոն, Սպիտակ	TLR-11	35 157 000	13 725 000	21 432 000
10	Մարզադպրոց, Ալավերդի	TLR-01	12 485 000	16 908 000	-4 423 000
11	Մանկապարտեզ, Գյումրի	TSH-12	25 150 000	21 790 000	3 360 000
12	Մասնագիտացված դպրոց, Պեմզաշեն	TSH-18	15 110 000	13 068 800	2 042 000
13	Դպրոց, Կրասար	TSH-02	44 725 000	41 645.200	3 079 800
14	Թանգարան, Գորիս	TSQ--01	1 300 000	1 321 190	-21 190
15	Զրագիծ, Ախլաթյան	TSQ-04	1 190 000	0	1 190 000
16	Զրագիծ, Խնձորեսկ	TSQ-08	356 000	3 870 000	-3 514 000
17	Դպրոց, Պողոսյան	TTV--09	39 666 000	47 126 000	-7 460 000
18	Համայնքային կենտրոն, Լոյեմբերյան	TTV-13	22 551 000	22 832 000	-281 000
19	Զրագիծ, Ագարակաձոր	TVZ-05	960 000	960 000	0
20	Զրագիծ, Զրվեժ	TKQ-09	7 200 000	0	7 200 000

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ծրագրերի մեծ մասում պահպանության ու շահագործման նպատակով կատարվել է ավելի քիչ ծախս, քան նախատեսված է եղել համայնքի կողմից փորձաքննության փուլում տրամադրված տեղեկանքի համաձայն: Այդպիսի ծրագրերը 12-ն են: Մեկ դեպքում պլանավորված ծախսը նույնությամբ համընկնում է փաստացի կատարվածին, մնացած յոթ ծրագրերում ծախսվել է

պլանավորվածից ավելին: Ծախսերը ըստ ծրագրերի տեսակների դիտարկելու դեպքում ակնհայտ են դառնում մի քանի օրինաչափություններ: Այսպես.

- Մանկապարտեզներ - Դիտարկված մանկապարտեզներից 2020 թվականի ընթացքում գործել են միայն Արարատի, Գյուլագարակի և Գյումրիի մանկապարտեզները (բացի արտակարգ իրավիճակի պատճառով ընդհանուր լոքդաունի ամիսներից), ներառյալ ձմեռային ամիսները: Առաջին երկու դեպքում փաստացի կատարված ծախսերը զգալիորեն գերազանցում են նախատեսված գումարը: Մնացած մանկապարտեզները նույն թվականին գործել են մեկից չորս ամսվա ընթացքում, ծախսերը թերակատարվել են (վճարվել է միայն աշխատավարձ և մասամբ կոմունալ վճարներ):
- Հանրակրթական ու մասնագիտացված դպրոցներ - Պտղավանի դպրոցի փաստացի ծախսերը գերազանցված են, իսկ Կրասարիներ՝ թերաձախսված: Այլավերդու մարզադպրոցի ծախսերը կանխատեսվածից բարձր են եղել, չնայած դպրոցը ոչ բոլոր ամիսներին է գործել: Պեմզաշենի երաժշտական դպրոցի ծախսերը մոտ են կանխատեսվածին չնչին նվազումով:
- Համայնքային կենտրոններ - Դիտարկված երեք համայնքային կենտրոններից երկուսի (Գորիսի Սերո Խանզադյանի թանգարան և Նոյեմբերյանի Հույսի կամուրջ կենտրոն) փաստացի ծախսերը համընկնում են նախատեսվածին, իսկ Սպիտակի կենտրոնինը զգալիորեն պակաս է, քանի որ ջեռուցման համակարգը ձմեռային ամիսներին չի գործարկվել:

Ջրագծեր - Ջրվեժի ջրագիծը հանձնված է ԶՕԸ-ի կառավարմանը, հետևաբար համայնքը պահպանության հետ կապված ծախսեր չի կատարում: Մյուս դեպքերում պահպանության համար ծախսերը ուղղվում են ջրմուղագործի աշխատավարձին: Պահպանությանն ուղղված այլ ծախսերի կարիք չի եղել: Խնձորեսկի պարագայում ծախսերը զգալիորեն գերազանցում են նախատեսվածը, քանի որ Գորիս համայնքն իր նախաձեռնությամբ տեղադրել է ջրաչափեր, ինչը նախատեսված չի եղել նախագծով:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ վերակառուցված կամ նորովի կառուցված ենթակառուցվածքները կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված գործել են ոչ լրիվ հզորությամբ կամ նախատեսվածից կարճ ժամանակշրջանի ընթացքում: Հետևաբար, 2020 թվականի արդյունքները կարող են թերի լինել վերլուծության հիմք հանդիսանալու համար: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ կարիք կա Վերջնական փորձաքննության «Ծրագրի ավարտից հետո նախատեսվող ծախսերը» բաժնում ներկայացված ծախսերի հաշվարկը կատարել ավելի մեծ ստույգությամբ:

Ենթախնդիր 3.3. Նախագծի և շինաշխատանքների թերությունների ազդեցությունը ենթակառուցվածքների պահպանման վրա:

Ծրագրերի մեծ մասի դեպքում նախագծի ու շինաշխատանքների թերությունները վճռորոշ ազդեցություն ունեն ենթակառուցվածքների պահպանության վրա: 3.1. կետում ներկայացված և պահպանության համար ցածր գնահատված ծրագրերում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք փոխկապակցված են նախագծման և շինարարության փուլերում եղած թերությունների հետ: Նման թերությունները մեծացնում և ապագայում էլ ավելի են մեծացնելու համայնքների ծախսերը ենթակառուցվածքները պատշաճ պահպանելու համար: 1.5; 2.2; 2.3; 2.5 կետերում նշված նախագծերին, շինաշխատանքների և օգտագործված նյութերի որակին վերաբերող թերություններն անմիջականորեն ազդում են ենթակառուցվածքի պահպանության վրա:

Այդուհանդերձ, մի քանի ենթակառուցվածքների դեպքում (Պտղավանի դպրոց, Գյումրու «Արևիկ» մանկապարտեզ) անհրաժեշտություն կա բարելավել պահպանմանն ուղղված ջանքերը՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով ընթացիկ նորոգումներին ու ներքին հարդարմանը, խուսափելու համար թերությունների կուտակումից և ապագայում վերանորոգման նպատակով մեծ ծախսեր կատարելուց:

4. Շինաշխատանքների ծախսերի գնահատում

Հաշվետվության այս հատվածում ներկայացված են շինաշխատանքների, նյութերի ու սարքավորումների գնագոյացման մեխանիզմները, ՀՏՁՀ և այլ կազմակերպությունների նախահաշիվներում միավոր գների համեմատությունը, ՀՏՁՀ-ի կողմից հաշվարկված և մրցույթում հաղթող ճանաչված գնառաջարկների հարաբերակցությունը, ինչպես նաև գնառաջարկների նվազեցման կապը շինաշխատանքների որակի հետ:

Ենթախնդիր 4.1. Նախահաշիվներում շինաշխատանքների, նյութերի և սարքավորումների գնագոյացման մեխանիզմները:

Համաձայն ՄԼՏՁ Ղեկավար Ձեռնարկի, ծրագրերի նախահաշիվները կազմվում են հիմնադրամի բազայի միավոր գների հիման վրա՝ համաձայն Համաշխարհային բանկի կողմից հաստատված ձևի: Հիմնադրամի նախահաշիվային բազան կազմված է հիմնականում «ՀՀ-ում գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգի», սկզբունքով: ՀՀ-ում նախահաշիվները հիմնականում կազմվում են ՀՀ Կառավարության կողմից 23.06.2011թ N879-Ն հրամանով հաստատված շինարարական աշխատանքների գործող գների հաշվարկների մեթոդական ցուցումների համաձայն: Միավոր արժեքը բաղկացած է տվյալ աշխատանքի (տողի) նյութերի, աշխատավարձի և մեքենա-մեխանիզմների շահագործման գների (մեկ, կամ մի քանիսի) գումարից (տողում կարող է լինել միայն նյութ (նյութեր), միայն աշխատավարձ, միայն սարքավորում):

Աշխատավարձի և մեքենա-մեխանիզմների շահագործման գները մասամբ ձևավորված են ՀՀ գործող (1984թ) նորմերին համաձայն՝ ինդեքսավորման եղանակով (ռուբլի-դրամ): Աշխատավարձը և մեքենա-մեխանիզմների շահագործման գների ձևավորումը, ի տարբերություն ընդունված ձևի, ցույց չի տրվում նախահաշիվներում, հաշվարկվում է միավոր գների բազայում և նախահաշիվում ցույց է տրվում վերջնական արդյունքը՝ անմիջապես դրամի տեսքով: Նյութածախսը հիմնականում համապատասխանում է ՀՀ գործող (1984թ) նորմերին: Նյութերի գները հիմնականում համընկնում են նախկինում «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոնի (ԳՎԻԿ-ի), իսկ ներկայումս Ֆինանսների նախարարության կողմից թողարկված տեղեկագրերի գների հետ:

Որոշ տողերի գնային բաղադրիչները մասամբ կամ ամբողջովին վերանայված են, ինչը հիմնականում վերաբերում է այն նյութերին, որոնք բացակայում են տեղեկագրում, կամ աշխատանքներին, որոնք նախատեսված չեն եղել գործող նորմերով: Այսպես.

- Որոշ նյութերի գները ընդունված են շուկայի ուսումնասիրության հիման վրա, մի քանի ներմուծող արտադրող հիմնարկներից տեղեկատվություն ստանալու միջոցով: Աշխատավարձը և մեքենա-մեխանիզմների շահագործման որոշ գներ ընդունվել են հարցման եղանակով՝ հարցումները մի քանի տարբեր աղբյուրներից իրականացվելու միջոցով:

Նման դեպքերում գնագոյացման մասին որոշումը կայացվել է ներքին քննարկման արդյունքում: Նշված փոփոխությունների մի մասը թելադրված է ՀՏՁ կողմից նյութերի, սարքավորումների և աշխատանքների որակի վերաբերյալ ներկայացվող հատուկ պահանջներով:

Ինչպես նշվեց, ծրագրերի նախահաշիվները կազմվում են հիմնադրամի միավոր գների բազայի հիման վրա՝ համաձայն Համաշխարհային բանկի կողմից հաստատված ձևի: Ընդ որում, ՀՏՁ կողմից թողարկված նախահաշիվներում անուղղակի ծախսերի հաշվարկը զգալի տարբերվում են ՀՀ-ում ընդունվածից: Այսպես.

Աղյուսակ 14. ՀՀ-ում գործող և ՀՏՁ-ում ընդունված անուղղակի ծախսերի (%) համեմատություն

	Անուղղակի ծախսերի անվանումը	ՀՀ-ում գործող* %	ՀՏՁ-ում ընդունված %
1	Տրանսպորտային ծախսերը /միայն նյութերի համար/	Փոփոխական ըստ մարզերի /համընկնում են/	Փոփոխական ըստ մարզերի /համընկնում են/
2	Այլ նյութեր /միայն նյութերի համար/	5	--
3	Պահեստավորման ծախսեր /միայն նյութերի համար/	2	--
4	Վերադիր ծախսեր	13.3	8
5	Շահույթ	11	10
6	Ժամանակավոր շենքեր և կառույցներ	փոփոխական	--
7	Զմեռային թանկացում	փոփոխական	--
8	Փոքր ծավալի համար՝		
	- մինչև 25 մլն դրամ	2	--
	- մինչև 50 մլն դրամ	1,5	--
	- մինչև 100 մլն դրամ	1	--
9	Գոյացած ոչ ընթացիկ աղբի տեղափոխման ծախսեր	0,15	--
10	Տեխնիկական հսկողություն	փոփոխական	փոփոխական
11	Հեղինակային հսկողություն	0,6	փոփոխական
12	Չնախատեսված աշխատանքներ և ծախսեր	փոփոխական	--
13	Ապահովագրություն	--	0,5 (100 մլն-ից ավել ծրագրերի համար)
14	Նախագծման ծառայություններ	--	փոփոխական
15	Տեխնիկական փորձագիտական ծառայություններ	--	փոփոխական
16	Այլ ծախսեր	--	2

ՀՀ-ում գործող և ՀՏՁ-ում ընդունված անուղղակի ծախսերի համեմատությունը ցույց է տալիս հետևյալը.

- Տրանսպորտային ծախսերի տոկոսները մշակված են Քաղաքաշինության նախարարության կողմից՝ ելնելով շինարարության պայմաններից (շինարարության վայրից, տեղափոխման հեռավորությունից, շին. հրապարակ հասցնելու բարդությունից: ՀՀ-ում գործող և հիմնադրամով թողարկված նախահաշիվներում դրանք համընկնում են:
- Այլ նյութերի համար Քաղաքաշինության կոմիտեի կողմից սահմանված է 5%: Հիմնադրամում դա հաշվարկվում է նորմերի տվյալներով, յուրաքանչյուր նյութի համար առանձին և ներառվում է տվյալ նյութի միավոր արժեքի մեջ՝ նախկինում նորմերում բացի նյութածախսից տրվում էր այլ նյութերի արժեքը ռուբլիով, այդ գումարը վերահաշվարկված տեսքով գումարվում է նյութերի արժեքին:

3. Պահեստավորման ծախսեր՝ շին. հրապարակում նյութերի պահեստավորման համար Քաղաքաշինության կոմիտեի կողմից նախատեսված է 2%, հիմնադրամը նման տոկոս չի կիրառում:

4, 5. Վերադիր ծախսերի և շահույթի համար կիրառվում են ավելի ցածր տոկոսներ, քան ընդունված է Քաղաքաշինության նախարարության կողմից: Միգուցե դա արդարացված է, քանի որ այդ տոկոսները կիրառվում են նախահաշվի ամբողջ ուղղակի արժեքի նկատմամբ, ներառյալ սարքավորումների արժեքը: ՀՀ գործող նորմերով սարքավորումների նկատմամբ այդ տոկոսները չեն կիրառվում:

6. Ժամանակավոր շենքեր և կառույցներ՝ ժամանակավոր, կենցաղային նշանակության (շարժական կամ հավաքովի) շենքերի և շինությունների, պահեստների, ժամանակավոր ինժեներական ցանցերի (էլեկտրաէներգիա, ջուր, մոտեցնող ճանապարհներ և հարթություններ և այլն) մշակված են Քաղաքաշինության կոմիտեի կողմից, փոփոխական են կախված է շինության տեսակից, պատվիրատուից և այլն: Հիմնադրամը նման տոկոս չի կիրառվում:

7. Ձմեռային թանկացում (կամ կլիմայական պայմաններ)՝ շինարարական աշխատանքների վրա կլիմայական պայմանների ազդեցության լրացուցիչ ծախսերն ընդունվում են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նորմերով: Կախված է շինարարության գտնվելու վայրից (գոտուց) (Հայաստանի համար ընդունված է 3 գոտի՝ տաք, չափավոր, ցուրտ): Հիմնադրամը նման տոկոս չի կիրառում:

8. Փոքր ծավալի շինմոնտաժային աշխատանքների համար նախատեսված լրացուցիչ ծախսեր հիմնադրամում չի կիրառվում: Քաղաքաշինության կոմիտեի կողմից կիրառվում են հետևյալ տոկոսները՝

- 1-ից մինչև 25 մլն դրամ - 2%
- 25-ից ավելի մինչև 50 մլն դրամ – 1.5%
- 50-ից ավելի մինչև 500 մլն դրամ - 1%

9. Շինմոնտաժային աշխատանքների ավարտից հետո տարածքի մաքրման և գոյացած (ոչ ընթացիկ) աղբի տեղափոխման աշխատանքների համար Քաղաքաշինության կոմիտեի կողմից նախատեսված է 0.15%, որը հիմնադրամի կողմից չի կիրառվում:

10. Տեխնիկական հսկողության համար նախատեսված տոկոսը ընդունված նորմերով փոփոխական է՝

- մինչև 50 մլն դրամ - 2%
- 50-100 մլն դրամ – 1.8%
- 100-300 մլն դրամ – 1.5%
- 300-500 մլն դրամ – 1.3%
- այլ

Նշված տոկոսները կիրառվում են նախահաշիվներում, ՀՆՏԶ-ում այդ տոկոսները նախահաշվային գներում չեն ներառվում, այլ հաշվարկվում են առանձին և որոշվում են մրցութային եղանակով:

11. Հեղինակային հսկողություն՝ ընդունված նորմերով նախատեսված է 0.6%, կիրառվում են նախահաշիվներում, հիմնադրամում այդ տոկոսը նախահաշվային գներում չի ներառվում, հաշվարկվում է առանձին, որոշվում է մրցութային եղանակով:

12. Չնախատեսված աշխատանքներ և ծախսեր՝ մշակված է Քաղաքաշինության կոմիտեի կողմից, փոփոխական է, կախված է շինության տեսակից, պատվիրատուից և այլն: Հիմնադրամի կողմից չի կիրառվում:

13. Ապահովագրություն՝ կիրառվում է հիմնադրամում մեծ ծրագրերի նախահաշիվներում:

14. Նախագծման ծառայություններ՝ կիրառվում է հիմնադրամի կողմից, հաշվարկվում է առանձին նախահաշիվներից, որոշվում է մրցութային եղանակով:

15. Տեխնիկական փորձագետների ծառայություններ՝ կիրառվում է հիմնադրամի կողմից, հաշվարկվում է առանձին նախահաշիվներից, որոշվում է մրցութային եղանակով:

16. Այլ ծախսեր 2 %՝ մշակված է ՀՏՁՀ-ի կողմից և մասամբ փոխարինում է Քաղաքաշինության կոմիտեի կողմից կիրառվող 6, 7, 8, 9, 12 կետերում նշված ծախսերը:

Նշված 10, 11, 13, 14, կետերի արժեքները ներառվում են ենթածրագրի ընդհանուր արժեքում և հաջորդ ենթախնդրի ներկայացման ժամանակ հաշվի չեն առնվի, քանի որ դրանք ներառված չեն հիմնադրամի շինարարական աշխատանքների նախահաշիվների գումարների մեջ:

Ի տարբերություն գործող կարգի ՀՏՁՀ –ն կարող է՝

- Մշակել նոր աշխատանքային տողեր, որոնք գործող նորմերով նախատեսված չեն և մտցնել նախահաշվային բազա:
- Որոշ ճշգրտումներ մտցնել նորմերով նախատեսված տողերում, եթե դրանք չեն համապատասխանում հիմնադրամի պահանջներին:

Ընդհանուր առմամբ ՀՏՁՀ-ի միավոր գների բազայի վրա հիմնված նախահաշիվներն ավելի պարզ են և մատչելի: Նյութերի, աշխատավարձի և սարքավորումների միավոր գների հաշվարկը, որը սկզբունքորեն չի տարբերվում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հաստատված մոտեցումներից, կատարվում է բազայում, իսկ նախահաշվում ներկայացվում են միավոր գների բազայում կատարված հաշվարկների վերջնական արդյունքները: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս համեմատաբար կարճ ժամկետում հաշվարկել մեծ քանակի նախահաշիվներ և խուսափել նույն ժամանակահատվածում պատրաստվող նախահաշիվներում նմանատիպ աշխատանքները տարբեր միավոր գներով գնահատելու վտանգից, ինչը հաճախ հանդիպում է տարբեր նախագծային կազմակերպությունների կողմից մշակված նախահաշիվները համեմատելիս:

Նախահաշիվների կազմման հետագա բարելավման նպատակով կարելի է՝

- ՀՏՁՀ-ի բազայում և նախահաշիվների կազմման կարգում նյութերի և սարքավորումների նկատմամբ կիրառել նույն տոկոսներն ու գործակիցները: Ներկայումս, ըստ գործող կարգի, սարքավորումների նկատմամբ որոշ տոկոսներ (վերադիր ծախսեր, շահույթ և այլն) չեն կիրառվում:
- Ավելի հաճախ թարմացնել բազայի տվյալները՝ բացի տեղեկագրից ավելի խորը ուսումնասիրելով նաև շուկան:

Որոշ աշխատանքների նյութերի, աշխատավարձերի և սարքավորումների գները, տարբերվում են սովորաբար կիրառվող գներից: Օրինակ՝

Բազայում և համապատասխան նախահաշիվներում բուլդոզերի որոշ աշխատանքները գնահատված է էքսկավատորի աշխատանքից զգալի բարձր: Սակայն Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչների և ջրատարի կառուցման նախահաշվում, օրինակ, բուլդոզերի աշխատանքը գնահատված է իրականին ավելի մոտ:

- Բետոնե և երկաթբետոնե աշխատանքներն, ըստ բազայի, հիմնականում գնահատված են ավելի ցածր ՀՀ ընդունված գներից (նյութ, աշխատավարձ, սարքավորում): Նպատակահարմար է թարմացնել ամբողջովին:
- Մետաղական դռների տեղադրումը գնահատված է ավելի ցածր ՀՀ ընդունված գներից (հիմնականում նյութերը):

- Պատերի սվաղում ցեմենտ-ավազային շաղախով, ցեմենտ-ավազային հարթեցնող շերտ՝ աշխատավարձը բարձր է ՀՀ-ում ընդունվածից:
- Խեցեսալե (կերամոզրանիտե, պրեսգրանիտե) հատակների իրականացում, պատերի երեսպատում հախճաասալով, ներկում լատեքսային և ճակատային ներկերով, վինիլային հատակների իրականացում (այն կազմակերպությունները, որոնք զբաղվում են այս տիպի հատակներով, հաշվարկում են արժեքը և տրամադրում գնային առաջարկ, աշխատավարձը ներառում են այդ առաջարկում, հակառակ դեպքում ընդունված է կիրառել լինդեումի հատակների իրականացման աշխատավարձը՝ աշխատանքներում աշխատավարձը բարձր է ՀՀ-ում ընդունվածից:
- Տանիքի մանր ծածկույթներ (պիպ, գագաթնամաս, գոգնոց, երեսպատում և այլ) ներկում, ասֆալտաբետոնե ծածկույթի պատրաստում - աշխատավարձերը զգալի բարձր են ՀՀ ընդունվածից:
- Ջերմակամրջակով ալյումինե դռներ և պատուհաններ – գները չեն համընկնում տեղեկագրի գների հետ (պատուհանների դեպքում ավելի բարձր են, դռների դեպքում՝ ավելի ցածր), կան գնային տարբերություններ տարբեր նախահաշիվներում: Ցանկալի է, որ չլինեն ավելի ցածր, հաշվի առնելով պահանջվող որակը:

Եթե հաճախ օգտագործվող նյութերի գները բացակայում են տեղեկագրում, անհրաժեշտ է կատարել հարցում երեք արտադրող (կամ ներմուծող) կազմակերպություններին և կողմնորոշվել իրենց կողմից տրամադրված գնային առաջարկությունների հիման վրա:

Ինչ վերաբերում է վերը նշված բարձր աշխատավարձերին, ապա անհրաժեշտ է նշել, ՀՀ-ում ընդունված մեթոդաբանության համաձայն, աշխատավարձերը հաշվարկվում են դեռևս 1984 թ. ընդունված գների ինդեքսավորմամբ և հաճախ չեն համընկնում իրական շուկայական գների հետ:

Աշխատավարձերի համար կարող են կիրառվել ինդեքսավորման արդյունքում ընդունված գներից տարբերվող գներ, որոնք պետք է հիմնվորված լինեն շուկայի մշտական ուսումնասիրման և վերլուծության արդյունքներով:

Ենթախնդիր 4.2. Հիմնադրամի և այլ կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացված շինաշխատանքների արժեքի համեմատություն:

Ստորև ներկայացված 15.1; 16.1; 17.1 ; 18.1; 19.1 աղյուսակներում բերված են ՀՏԶ և այլ ծրագրերով հաշվարկված նույնանման շինաշխատանքների արժեքները: Իսկ հետևյալ աղյուսակներում՝ 15.2; 16.2; 17.2; 18.2; 19.2 համեմատվել են նույն ծրագրերի մեկ միավորի արժեքները և անուղղակի ծախսերի տոկոսը:

Աղյուսակ 15.1 Կրասարի դպրոցի շենքի (ՀՏԶ) և Գյումրու «Վարդուհի» արվեստի դպրոցի կառուցման (ՀՀ քաղշին կոմիտե) արժեքների համեմատություն

Կրասարի դպրոցի շենքի կառուցում 100 աշակերտի համար (ՀՏԶ)		Գյումրու «Վարդուհի» արվեստի դպրոցի կառուցում (Օյունջյան հիմնադրամ)	
Անվանում	Գումար	Անվանում	Գումար
Նախահաշվի ուղիղ ծախսեր	145792.08	Շինմոնտաժային աշխ. Ներառյալ վերադիր ծախսեր և շահույթ	272034.22
Վերադիր ծախսեր 8%	11663.366	Ժամանակավոր շենք, կառույց 1.5%	4080.513

Ընդամենը	157455.441	Ընդամենը	276114.733
Շահույթ 10%	15745.544	Զմեռային թանկացում 1.6%	4417.836
Ընդամենը	173200.985	Ոչ ընթացիկ ադր 0.15%	414.172
Այլ Ծախսեր 2%	3464.020	Ընդամենը	280946.741
Ընդամենը	176665.005	Սարքավորումներ	4318.910
ԱԱՀ 20%	35333.001	Ընդամենը	285265.651
Ընդամենը	211998.006	Չնախատեսված ծախսեր 3%	8557.970
Ապահովագրություն 0.5%	1059.990	Ընդամենը	293823.621
		ԱԱՀ 20%	58764.724
Ընդամենը	213057.996	Ընդամենը	352588.345

Աղյուսակ 15.2 Կրասարի դպրոցի շենքի (ՀՏԶ) և Գյումրու «Վարդուհի» արվեստի դպրոցի կառուցում (Օյունջյան հիմնադրամ) մեկ մ² արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն:

Օրագիր	Կառույցի մակերես	Մեկ քառ մ արժեքը	Անուղղակի ծախսեր (%)
Կրասարի դպրոցի կառուցում	822.5մ ²	213057.996/822.5= 259.037 հազար դրամ	46,1%
Գյումրու «Վարդուհի» արվեստի դպրոցի կառուցում (Օյունջյան հիմնադրամ)	1402.3մ ²	352 588.345/ 1402.3 = 251.436 հազար դրամ	63.1%

Աղյուսակ 16.1 Գյուլագարակի մանկապարտեզի (ՀՏԶ) և Ստեփանակերտի մանկապարտեզի (ԱՀ քաղշին կոնիտե) կառուցում

Գյուլագարակի մանկապարտեզի կառուցում (ՀՏԶ)		Ստեփանակերտի մանկապարտեզի կառուցում (ԱՀ քաղշին կոնիտե)	
Անվանում	Գումար	Անվանում	Գումար
Նախահաշվի ուղիղ ծախսեր	121724.5	Շինմոնտաժային աշխ. Ներառյալ վերադիր ծախսեր և շահույթ	681554.15
Վերադիր ծախսեր 8%	9737.960	Ժամանակավոր շենք, կառույց 12.5%	10223.312
Ընդամենը	131462.960	Ընդամենը	691777.462
Շահույթ 10%	13146.246	Զմեռային թանկացում 0.8%	5534.220
Ընդամենը	144608.711	Ոչ ընթացիկ ադր 0.15%	1022.331
Այլ Ծախսեր 2%	2892.174	Ընդամենը	698.334.013
Ընդամենը	147500.885	Սարքավորումներ	10079.290
ԱԱՀ 20%	29500.177	Ընդամենը	708413.303
Ընդամենը	177001.062	Չնախատեսված ծախսեր 3%	21252.399
Ապահովագրություն 0.5%	885.005	Ընդամենը	729665.702
		ԱԱՀ 20%	145933.140
Ընդամենը	177886.067	Ընդամենը	875598.842

Աղյուսակ 16.2 Գյուլագարակի մանկապարտեզի (ՀՏԶ) և Ստեփանակերտի մանկապարտեզի (ԱՀ քաղշին կոնիտե) մեկ մ² -ի արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն:

Ծրագիր	Կառույցի մակերես	Մեկ քառ. մ արժեքը	Անուղղակի ծախսեր (%)
Գյուլագարակի մանկապարտեզի կառուցում (ՀՏՁՀ)	646.4մ ²	177886.067/646.4=275.195 <u>հազար դրամ</u>	46,1%
Ստեփանակերտի մանկապարտեզի կառուում (ԱՀ քաղշին կոնխտե)	3398.88մ ²	875598.842/3398.88=257.614 <u>հազար դրամ</u>	≈58.4%

Աղյուսակ 17.1 Գյուլագարակի մանկապարտեզի տանիքի (ՀՏՁՀ) և Մարտունի քաղաքի բնակելի շենքի տանիքի կառուցում (Գեղարքունիքի մարզպետարան)

Գյուլագարակի մանկապարտեզի տանիքի կառուցում (ՀՏՁՀ)		Մարտունի քաղաք, բնակելի շենքի տանիքի կառուցում	
Անվանում	Գումար	Անվանում	Գումար
Նախահաշվի ուղիղ ծախսեր	20187.925	Շինմունտաժային աշխ. ներառյալ վերադիր ծախսեր և շահույթ	16851.94
Վերադիր ծախսեր 8%	1615.034	Ժամանակավոր շենք, կառույց 1%	168.519
Ընդամենը	21802.959	Ընդամենը	17020.459
Շահույթ 10%	2180.295	Զմեռային թանկացում 1.6%	272.327
Ընդամենը	23983.255	Ոչ ընթացիկ ադր 0.15%	25.531
Այլ Ծախսեր 2%	479.665	Ընդամենը	17318.317
Ընդամենը	24462.920	Սարքավորումներ	
ԱԱՀ 20%	4892584	Ընդամենը	
Ընդամենը	29355.504	Չնախատեսված ծախսեր 3%	519.550
Ապահովագրություն 0.5%	146.778	Ընդամենը	17837.867
		ԱԱՀ 20%	3567.573
Ընդամենը	29502.282	Ընդամենը	21405.440

Աղյուսակ 17.2 Գյուլագարակի մանկապարտեզի (ՀՏՁՀ) և Մարտունի քաղաքի բնակելի շենքի տանիքի կառուցման (Գեղարքունիքի մարզպետարան) մեկ մ² -ի արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն

Ծրագիր	Կառույցի մակերես	Մեկ քառ. մ արժեքը	Անուղղակի ծախսեր (%)
Գյուլագարակի մանկապարտեզի կառուցում՝ տանիք(ՀՏՁՀ)	850մ ²	29502.282/850=34.708 <u>հազար դրամ</u>	46,1%
Մարտունի, բնակելի շենքի տանիք	564մ ²	21405.440/564=37.953 <u>հազար դրամ</u>	59,7%

Աղյուսակ 18.1 Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչի և ջրատարի կառուցում (ՀՏՁՀ) և Գավառի նոր այգիների ոռոգման համակարգի կառուցում (Գեղարքունիքի մարզպետարան)

Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչի և ջրատարի կառուցում (ՀՏՁՀ)		Գավառի նոր այգիների ոռոգման համակարգի կառուցում (Գեղարքունիքի մարզ)	
Անվանում	Գումար	Անվանում	Գումար
Նախահաշվի ուղիղ ծախսեր	3235.939	Շինմունտաժային աշխ. ներառյալ վերադիր ծախսեր և շահույթ	7088.74

Վերադիր ծախսեր 8%	258.875	Ժամանակավոր շենք, կառույց 3%	212.662
Ընդամենը	3494.814	Ընդամենը	7301.402
Շահույթ 10%	349.481	Ձմեռային թանկացում 2.2%	160.631
Ընդամենը	3844.296	Ոչ ընթացիկ աղբ 0.15%	10.952
Այլ Ծախսեր 2%	76.886	Ընդամենը	7472.985
Ընդամենը	3921.181	Սարքավորումներ	
ԱԱՀ 20%	784.236	Ընդամենը	
Ընդամենը	4705.418	Չնախատեսված ծախսեր 4%	298.919
Ապահովագրություն 0.5%		Ընդամենը	7771.905
		ԱԱՀ 20%	1554.381
Ընդամենը	4705.418	Ընդամենը	9326.285

Աղյուսակ 18.2 Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչի և ջրատարի կառուցում (ՀՏՁՀ) և Գավառի նոր այգիների ոռոգման համակարգի (Գեղարքունիքի մարզպետարան) մեկ գծամետրի արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն

Ծրագիր	Կառույցի երկարութ	Մեկ գծամետրի արժեքը	Անուղղակի ծախսեր (%)
Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչի և ջրատարի կառուցում (ՀՏՁՀ)	578 գմ	4705.418/578=8.141 հազար դրամ	45.4%
Գեղարքունիքի մարզի Գավառի նոր այգիների ոռոգման համակարգի կառուցում	1015 գմ	9326.285/1015=9.188 հազար դրամ	≈65.4%

Աղյուսակ 19.1 Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՁ հատված (ՀՏՁՀ) և Սառնաղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում, ՕԿՁ հատված (Շիրակի մարզպետարան)

Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՁ հատված (ՀՏՁՀ)		Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում, ՕԿՁ հատված	
Անվանում	Գումար	Անվանում	Գումար
Նախահաշվի ուղիղ ծախսեր	15828.052	Շինմոնտաժային աշխ. ներառյալ վերադիր ծախսեր և շահույթ	12595.88
Վերադիր ծախսեր 8%	1266.244	Ժամանակավոր շենք, կառույց 1.2%	151.151
Ընդամենը	17094.296	Ընդամենը	12747.031
Շահույթ 10%	1709.429	Ձմեռային թանկացում 1.12%	142.767
Ընդամենը	18803.726	Ոչ ընթացիկ աղբ 0.15%	19.121
Այլ Ծախսեր 2%	376.075	Ընդամենը	12908.918
Ընդամենը	19179.800	Չնախատեսված ծախսեր 3%	387.268
ԱԱՀ 20%	3835.960	Ընդամենը	13296.185
Ընդամենը		ԱԱՀ 20%	2659.237
Ընդամենը	23015.760	Ընդամենը	15955.422

Աղյուսակ 19.2 Ագարակաձորի խմելու ջրի ՕԿՁ հատվածի (ՀՏՁՀ) և Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի ՕԿՁ հատվածի մեկ մ3 արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատություն

Ծրագիր	Կառույցի ծավալը	Մեկ մ ³ արժեքը	Անուղղակի ծախսեր (%)
Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՁ հատված (ՀՏՁՀ)	300մ ³	23015.760/300=76.719 <u>հազար դրամ</u>	45.4%
Շիրակի մարզի Սառնաղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում, ՕԿՁ հատված	150մ ³	15955.422/150=106.37 <u>հազար դրամ</u>	59.3%

Համեմատվող նախահաշիվներում կիրառված են ճշգրտումներ՝ համեմատումը նույնատիպ պայմանների բերելու նպատակով: Շենքերի դեպքում հանված են արտաքին հաղորդակցությունները և բարեկարգման աշխատանքները ուսումնասիրվել են միայն շենքին վերաբերող աշխատանքները, խողովակաշարերի դեպքում խողովակները բերված է խողովակների նույն տրամագծի հարաբերությամբ):

Կրասարի դպրոցի շենքի (ՀՏՁՀ) և Գյումրու «Վարդուհի» արվեստի դպրոցի կառուցում (Օյունջյան հիմնադրամ) ծրագրերից հանված են հետևյալ գլուխները

- Տարածքի բարեկարգում
- Արտաքին ջրամատակարարում
- Արտաքին կոյուղու ցանց
- Արտաքին գազատարի մոնտաժում

Գյուլագարակի մանկապարտեզի (ՀՏՁՀ) և Ստեփանակերտի մանկապարտեզի (ԱՀ քաղշին կոնիտե) կառուցում ծրագրերից հանված են հետևյալ գլուխները

- Բարեկարգում
- Ցանկապատ
- Արտաքին կոյուղի և կենցաղային կեղտաջրերի մաքրման կայան
- Գազամատակարարման արտաքին ցանց

Գյուլագարակի մանկապարտեզի տանիքի (ՀՏՁՀ) և Մարտունի քաղաքի բնակելի շենքի տանիքի կառուցման (Գեղարքունիքի մարզպետարան) ծախսերի համեմատության մեջ ճշգրտում չի կիրառվել:

Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչի և ջրատարի կառուցում (ՀՏՁՀ) և Գավառի նոր այգիների ոռոգման համակարգի (Գեղարքունիքի մարզպետարան) մեկ գծամետրի արժեքի և անուղղակի ծախսերի տոկոսի համեմատության ժամանակ խողովակները բերված են նույն տրամագծի հարաբերության, ուսումնասիրվել են համեմատվող նախահաշիվների մեկական ճյուղերը:

Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՁ հատված (ՀՏՁՀ) և Սառնաղբյուր համայնքի ջրամատակարարման համակարգի կառուցում, ՕԿՁ հատված (Շիրակի մարզպետարան) – խողովակները բերված են նույն տրամագծի հարաբերության, ուսումնասիրվել են համեմատվող նախահաշիվների մեկական ճյուղերը:

Վերը նշված հինգ զույգ ծրագրերի շինաշխատանքների մեկ միավոր արժեքների համեմատությունից պարզ է դառնում, որ Կրասարի դպրոցի և Գյումրու «Վարդուհի» արվեստի դպրոցի 1մ² արժեքները բավականին մոտ են: Բացի մեկ դեպքից (Գյուլագարակի մանկապարտեզ) մնացած դեպքերում ՀՏՁՀ ծրագրերի շինաշխատանքների մեկ միավորի արժեքն ավելի ցածր է այլ կազմակերպությունների կողմից

ֆինանսավորված ծրագրերի շինաշխատանքների մեկ միավոր արժեքից: Գյուլագարակի և Ստեփանակերտի մանկապարտեզների գնային համեմատումը ցույց է տալիս, որ Գյուլագարակի մանկապարտեզի 1մ² արժեքը ավելի բարձր է, տարբերությունը կազմում է 6.8%: Հարկ է նշել, սակայն, որ Գյուլագարակի մանկապարտեզը, ինչպես շինաշխատանքների որակի, այնպես էլ պահպանվածության մակարդակով, հետազոտողների կողմից արժանացել է գերազանց գնահատականի:

Գյուլագարակի մանկապարտեզի և Մարտունու Երևանյան փողոցի թիվ 10 շենքի տանիքների գնային համեմատումը ցույց է տալիս, որ Մարտունու Երևանյան փողոցի թիվ 10 շենքի տանիքի 1մ² արժեքը ավելի բարձր է, տարբերությունը կազմում է 9.35%:

Ախլաթյանի խմելու ջրի և Գավառ համայնքի նոր այգիների ոռոգման համակարգի գնային համեմատումից հետևում է, որ Գավառ համայնքի նոր այգիների ոռոգման համակարգի 1գմ արժեքն ավելի բարձր է, տարբերությունը կազմում է 12.86%:

Սառնադրյուր համայնքի ՕԿՁ-ի 1մ³ արժեքն ավելի բարձր է Ագարակաձորի ՕԿՁ-ի արժեքից, տարբերությունը կազմում է 38.6%

Ինչ վերաբերում է անուղղակի ծախսերի տոկոսներին, ապա դիտարկված բոլոր դեպքերում ՀՏՁ նախահաշիվներում դրանք ավելի ցածր են և ստանդարտացված՝ համեմատած այլ կազմակերպությունների կազմած նախահաշիվների:

Ենթախնդիր 4.3. Մրցույթի արդյունքում ծրագրերի նախահաշիվների գների նվազման ազդեցությունը շինաշխատանքների որակի վրա:

Դիտարկված բոլոր ծրագրերի նախահաշիվների գները մրցույթի արդյունքում նվազել են այս կամ այն չափով, նվազումները խմբավորվել են հետևյալ կերպ.

- Մինչև 10% նվազում
- 10% - 20% նվազում
- 20% — ավել նվազում

Աղյուսակ 20- ում համադրված են ծրագրերի արժեքի նվազման չափն ու շինաշխատանքների որակի գնահատականը

Աղյուսակ 20. Նախահաշիվի և փաստացի արժեքի կապը

	Ծրագրի անվանում, տեսակ և կոդ	ՀՏՁ-ի նախահաշիվի արժեքը /դրամ/	Ծրագրի փաստացի արժեքը /դրամ/	Մրցույթի արդյունքում նվազման տոկոսը	Շինաշխատանքների որակի գնահատական
1.	Փարպիի մանկապարտեզի վերակառուցում TAN-04	186,286,898	180,436,910	3.1	3
2.	Օհանավանի մանկապարտեզի վերակառուցում TAN-03	177,118,560	175,897,780	0.7	2
3.	Նորաշեն գյուղի ամբուլատորիայի	37,403,508	37,301,745	0.3	2

	հիմնանորոգում TAT-01				
4.	Ճամբարակի թ.3 մանկապարտեզի վերակառուցում TGQ-06	174,042,932	161,123,892	7.4	1
5.	Արգավանդի մանկապարտեզի վերակառուցում TAR-04	83,088,841	81,577,758	1.8	2
6.	Սպիտակի մշակույթի տան վերանորոգում, ջեռուցման համակարգի կառուցում TLR-11	76,430,405	75,163,300	1.7	3
7.	Պեմգաշենի երաժշտական դպրոցի կառուցում TSH-18	33,437,921	32,668,607	2.3	4
8.	Կրասարի դպրոցի շենքի կառուցում 100 աշակերտի համար TSH-02	226,995,896	224,996,302	0.9	3
9.	Գորիսի Սերո Խանգաղյանի տուն-թանգարանի վերակառուցում TSQ-01	69,836,686	69,033,494	1.2	3
10.	Ախլաթյանի խմելու ջրի ջրընդունիչների և ջրատարի կառուցում TSQ-04	47,644,655	46,152,814	3.1	4
11.	Խնձորենի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում TSQ-08	54,142,948	53,169,847	1.8	4
12.	Նոյեմբերյանի տարածաշրջանի "Հուլիսի կամուրջ" գրասենյակի վերակառուցում TTV-13	74,765,226	72,016,362	3.7	3
13.	Ագարակաձորի խմելու ջրի բաշխիչ ցանցի վերակառուցում, ՕԿՁ-ի կառուցում TVZ-05	50,887,736	49,526,702	2.7	3
14.	Ջրվեժ գ. տնամերձ հողամասերի ոռոգման համակարգի կառուցում TKQ-09	29,647,931	29,443,819	0.7	4
15.	Արարատ գ. մանկապարտեզի 3-րդ մասնաշենքի վերակառուցում TAT-06	142,175,596	115,297,991	18.9	3
16.	Գյուլագարակի մանկապարտեզի կառուցում TLR-03	201,644,027	168,980,686	16.2	4
17.	Ալավերդու ըմբշամարտի դպրոցի վերակառուցում TLR-01	95,980,938	79,558,043	17.1	3
18.	Գյումրու «Արևիկ» մանկապարտեզի վերակառուցում TSH-12	156,506,738	137,957,415	11.9	3
19.	Պտղավանի դպրոցի 2 մասնաշենքերի վերակառուցում TTV-09	185,347,204	156,822,650	15.4	2
20.	Արծվանիստի խմելու ջրի արտաքին համակարգի կառուցում TGQ-11	129,563,751	95,892,239	26.0	4

Ծրագրերի մեծ մասի դեպքում (70%) նախահաշիվները նվազել են մինչև 10%, որոնցից հինգի շինաշխատանքների որակը գնահատվել է «գերազանց», վեցինը՝ «լավ», չորսինը՝ «բավարար»:

Ծրագրերից միայն մեկում է նախահաշվային արժեքը նվազել 20 %-ից ավելի՝ Արծվանիստի խմելու ջրի արտաքին համակարգի կառուցման ծրագրում, որի շինարարության որակը փորձագետները գնահատել են «գերազանց», ինչը նշանակում է, որ նախահաշվի գնի նվազումը ազդեցություն չի թողել շինաշխատանքների որակի վրա:

Նախահաշիվները 10% - 20% -ով նվազել են հետևյալ ծրագրերում՝ Արարատի մանկապարտեզ-18,9%, Գյուլագարակի մանկապարտեզ-16,2%, Ալավերդու ըմբշամարտի դպրոց-17,1%, Պտղավանի դպրոց-15,4% , Գյումրու «Արևիկ» մանկապարտեզ-11,9%: Նշված հինգ ծրագրերից մեկի շինարարության որակը գնահատվել է «գերազանց», երեքինը՝ «լավ», մեկինը՝ «բավարար», որը նույնպես ցույց է տալիս, որ նախահաշվի արժեքի նվազումը որևէ էական ազդեցություն չի թողել շինաշխատանքների որակի վրա:

Հետևաբար, վերլուծությունից պարզ է դառնում, որ, նախահաշվի համեմատ, ծրագրի արժեքի նվազումը՝ անկախ նվազման չափից, շինաշխատանքների որակի վրա էական ազդեցություն չի թողնում: Այսպիսով՝ նախահաշվի մրցույթի արդյունքում գնի նվազման և շինարարության որակի միջև որևէ օրինաչափություն չի բացահայտվել:

II. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ (Բաղադրիչ 2)

5. Տրամադրված տեխնիկական միջոցների գնահատում

Բաղադրիչ 2-ի ներքո ուսումնասիրվել են հինգ միավորված համայնքներին (Ապարան, Ախուրյան, Վարդենիս, Ծաղկահովիտ, Տաշիր) տրամադրված տեխնիկական միջոցները: Տրամադրված միջոցների մանրամասն ցանկը ներկայացված է Հավելված 1-ում: Համայնքներին տեխնիկական տրամադրվել է կոմունալ ծառայությունների, ճանապարհների սպասարկման որակը բարելավելու համար, տեխնիկական վերազինման ու ծառայությունների մատչելիության բարձրացման շնորհիվ տնտեսական միջավայրն առավել մրցունակ դարձնելու, ջրամատակարարման ու ջրահեռացման խնդիրները լուծելու նպատակով:

Ուսումնասիրությունը կատարվել է Պատվիատուի կողմից հաստատված հարցերի շրջանակում և վերաբերում է տրամադրված տեխնիկայի փաստաթղթերի, պահպանման ու շահագործման, սպասարկող անձնակազմի որակավորման խնդիրներին:

Տեխնիկայի պահպանման որակը գնահատելու համար կիրառվել է 1-4 սանդղակը, որտեղ 1-ը վատ, 2-ը բավարար, 3-ը լավ, 4-ը գերազանց գնահատականն է: Նշված գնահատման չափորոշիչները հետևյալն են՝

«1» նիշով (վատ) – գնահատվում է հետևյալ դեպքում. Տրամադրված տեխնիկական անսարք վիճակում է, շահագործվում է համապատասխան որակավորում չունեցող անձանց կողմից: Ընթացիկ անհրաժեշտ պահեստամասեր, նյութեր ձեռք չեն բերվում, չի իրականացվում երաշխիքային և արտաերաշխիքային սպասարկում, ինչի պատճառով անհնարին է դառնում տեխնիկայի նորմալ շահագործումը, և մեծանում են վերանորոգման և սպասարկման աշխատանքների ծախսերը: Տեխնիկական կայանվում է դրսում, բաց տարածքում, անվտանգությունն ապահովված չէ:

«2» նիշով (բավարար) գնահատվում է այն դեպքում, երբ տեխնիկական շահագործում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ, ընթացիկ վերանորոգումը ապահովելու համար ձեռք են բերվում անհրաժեշտ պահեստամասեր, նյութեր: Իրականացվում է երաշխիքային և արտաերաշխիքային սպասարկում:

«3» նիշով (լավ) – գնահատվում է այդ դեպքում, երբ տեխնիկական շահագործում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ, ընթացիկ վերանորոգումը ապահովելու համար ձեռք են բերվում անհրաժեշտ պահեստամասեր, նյութեր: Իրականացվում է երաշխիքային և արտաերաշխիքային սպասարկում, տեխնիկայի վրացում: Տեխնիկական կայանվում է ծածկի տակ, անվտանգությունն ապահովված է:

«4» նիշով (գերազանց) գնահատվում են այդ դեպքում, երբ տեխնիկական շահագործում են համապատասխան որակավորում ունեցող մասնագետներ: Ընթացիկ վերանորոգումը ապահովելու համար ձեռք են բերվում անհրաժեշտ պահեստամասեր, նյութեր: Իրականացվում է երաշխիքային և արտաերաշխիքային սպասարկում: Տեխնիկայի կայանման համար առկա է փակ շինություն՝ հարմարեցված առկա տեխնիկայի ընթացիկ վերանորոգումը և սպասարկումը իրականացնելու համար: Դրա համար կոմունալ ծառայությունը ունի հաստիքային աշխատակիցներ: Ժամանակացույցով իրականացվում է շահագործվող տեխնիկայի վրացում, ախտահանում:

5.1 Միավորված համայնքներին տրամադրված տեխնիկայի վիճակը և պահպանման պայմանները:

Բոլոր հինգ համայնքներին տրամադրված տեխնիկական լավ վիճակում է և պատշաճ պահպանվում է: Սակայն դրանց պահպանման համար նախատեսված համայնքային փակ կայանատեղի ապահովված է միայն Տաշիր համայնքում: Ախուրյան և Ծաղկահովիտ համայնքներում փակ կայանատեղիները նախագծման փուլում են: Վարդենիսում և Ապարանում պահվում են առանձնացած, համայնքային սեփականություն հանդիսացող տարածքում: Թեև տեխնիկայի անվտանգությունն ապահովվում է բոլոր հինգ համայնքներում, սակայն փակ կայանատեղիների բացակայությունը (բացի Տաշիրից) դժվարություններ է առաջացնում ձմռան ցուրտ եղանակին շարժիչների գործարկման համար, ինչը հանգեցնում է վառելիքի լրացուցիչ ծախսի և վնասում շրջակա միջավայրը:

Տեխնիկայի անվտանգության ապահովումը բոլոր համայնքներում լավ է կազմակերպված, տեղադրված են տեսախցիկներ (Ախուրյան), նշանակված են պահակներ, առկա է գիշերային լուսավորություն:

Ըստ վերոնշյալի, համայնքին տրամադրված տեխնիկայի պահպանումը կարելի է գնահատել հետևյալ կերպ.

Աղյուսակ 21. Տեխնիկայի պահպանվածության գնահատում

Տաշիր	Ապարան	Ծաղկահովիտ	Ախուրյան	Վարդենիս
4	3	3	3	3

5.2 Նպատակային և տեխնիկական փաստաթղթերին համապատասխան շահագործում:

Բոլոր համայնքներում տեխնիկական շահագործվում է նույն նպատակով, ինչ համայնքը նշել է ծրագրային առաջարկում:

Վարդենիս- Տեխնիկայի սղության, ինչպես նաև որոշ տեխնիկական միջոցների իսպառ բացակայության պատճառով ձմռան ամիսներին ներհամայնքային, որոշ չափով, նաև միջհամայնքային ճանապարհներն անանցանելի էին դառնում, իսկ ամռանը՝ դժվար երթևեկելի: Համայնքը ստացած տեխնիկական միջոցներն օգտագործում է ճանապարհների բարեկարգման՝ հողի հարթեցման, հողի տեղափոխման, ձյան մաքրման

աշխատանքների իրականացման համար: Տրամադրված տեխնիկայի շնորհիվ բարելավվել է բնակչությանը տրամադրվող աղբահանության ու սանմաքրման ծառայությունը:

Օաղկահովիտ- Տրամադրված տեխնիկայի շնորհիվ հնարավոր է դարձել վերացնել չնախատեսված վայրերում աղբի կուտակումները, բարելավվել է աղբահանությունը, համայնքի բնակիչները պատրաստակամ են կատարել վճարումներ ծառայության դիմաց: Խմելու և ոռոգման ջրագծերի վթարավերականգնողական աշխատանքները հնարավոր է դարձել կատարել ժամանակին և որակով: Բարելավվել է ներհամայնքային ճանապարհների վիճակը, խճով և ավազով փոսալցումը կատարվում է արդյունավետ կերպով: Ձմռան ամիսներին հնարավոր է եղել ճանապարհները բաց պահել: Կոմունալ տեխնիկայի առկայությունը հնարավոր է դարձնում ոլորտի տարատեսակ աշխատանքերը դարձնել արդյունավետ:

Ախուրյան - Ախուրյան համայնքում բարելավվել է բնակչությանը տրամադրվող աղբահանության ծառայությունը, ծառայությունը նոր բնակավայրերում իրականացնելու շնորհիվ ավելացվել է ծառայություն ստացող բնակչության թիվը բարձրացել է ճանապարհների սպասարկման և կոմունալ ընդհանուր ծառայությունների որակը: Ընդլայնված տեխնիկական պարկը թույլ է տալիս փոքր ու միջին ձեռնարկատերերին, ֆերմերներին և ֆիզիկական անձանց բարձրացնել իրենց կողմից կատարվող աշխատանքների արդյունավետությունը:

Տաշիր - Համայնքում ստեղծվել են տնտեսական զարգացման նախադրյալներ, էկոլոգիական միջավայրի բարելավման և բնապահպանական խնդիրների լուծման շնորհիվ: Ստեղծվել են նոր աշխատատեղեր խոշորացված համայնքում կոմունալ սպասարկման (աղբահանություն, սանիտարական մաքրում և կոմունալ այլ ծառայություններ), ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգման ու սպասարկման բնագավառում:

Ապարան – Տեխնիկական օգտագործվում է համայնքի աղբահանության, կոմունալ այլ ծառայությունների, ձյան մաքրման, և այլ ծառայությունների ապահովման, ինչպես նաև համայնքը զբոսաշրջության, բնակչության և բիզնես ներդրումների նպատակով գրավիչ դարձնելու համար: Ձեռք բերված տեխնիկայի շնորհիվ Ապարան համայնքում հնարավոր է դարձել ավելի արագ և որակով վերացնել բնական և տարերային աղետների (կարկտահարություն, փոթորիկ, սելավ, ձյան և բքի պատճառով երթևեկության պարալիզացում) հետևանքները և խմելու ջրի մատակարարման խափանումները:

5.3 . Շահագործման համապատասխանությունը տվյալ մեխանիզմի տեխնիկական փաստաթղթերին:

Դիտարկված ծրագրերում տրամադրված տեխնիկական շահագործվում է մեխանիզմների տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

5.4. Երաշխիքային և արտաերաշխիքային սպասարկում:

Համաձայն տեխնիկայի երաշխիքային շահագործման փաստաթղթերի պահանջների, բոլոր ծրագրերում իրականացվել են տեխնիկական գնումներ (ՏՁ 1, ՏՁ 2): Բացի այդ, ըստ անհրաժեշտության, իրականացվել են արտաերաշխիքային ընթացիկ անհրաժեշտ սպասարկման աշխատանքներ, որոնք պատշաճ փաստաթղթավորված են:

Մասնավորապես՝ Ախուրյան համայնքում ձեռք են բերվել անվանդողեր, օդի առաջնային ու երկրորդական գոտիչ, վառելիքի գոտիչ, քսայուղ, բարձր ճնշման փողրակ: Ապարան համայնքը՝ շերեփի անկյունային ատամ, վառելիքի ու յուղի գոտիչ, կատարել է անվաբացքի և զուգորդման կարգավորում, վառոցքի մոմերի փոխում, դեկային ձգանի հետազոտություն, համակարգի ախտորոշում, կարգավորող կափարիչի փականի լվացում, ձեռք է բերել ներդիրների հավաքածու, հերմետիկ, արգելակման թմբուկի, լուսարձակների հ/տ,

կայունարարի բարձիկի փոխարինում, հետևի կամրջի հ/տ: Ծաղկահովիտ համայնքում ձեռք են բերվել դիմապակի, դինամոյի առանցքակալ, թերմոստատ:

5.5. Հաշվառում համայնքի գույքացուցակում:

Բոլոր համայնքներում տրամադրված տեխնիկան, որպես համայնքային սեփականություն, գրանցված և հաշվառված է համայնքի գույքացուցակում:

5.6. Մպասարկող անձնակազմի որակավորումը :

Վարդենիս, Տաշիր, Ախուրյան համայնքներն ապահովված են անհրաժեշտ մասնագետներով: Տրամադրված տեխնիկան շահագործում են համապատասխան որակավորում, տարիների փորձ և կրթություն ունեցող անձիք: Մպարան համայնքում հնարավոր է եղել ընդունել միայն մեկ վարորդ՝ անհրաժեշտ երկուսի փոխարեն: Ծաղկահովիտում ներգրավված վարորդը ծանոթ չի եղել նոր սերնդի աղբատար մեքենայի շահագործմանը: Հարցը կարգավորվել է համայնքի նախաձեռնությամբ վարորդին Երևանի կոմունալ ծառայությունում վերապատրաստման ուղարկելու միջոցով:

5.7. Տեխնիկայի համապատասխանությունը համայնքի տրամադրած մասնագրերին:

Համայնքներին տրամադրված տեխնիկան հիմնականում համապատասխանում է համայնքի կողմից տրված մասնագրերին:

Աղյուսակ 22. Տեխնիկայի համապատասխանությունը մասնագրերին

Ախուրյան

Անվանում	Պահանջվող	Տրամադրված
Ինքնաթափ մեքենա	Բեռնատարողություն 15տ, աշխատանքային ծավալ 10,85լ, հզորություն 191/260 կՎտ/ձ/ուժ	Շարժիչի հզորությունը 245 ձ/ուժ (Kamaz 65115-026):

Մպարան

Անվանում	Պահանջվող	Տրամադրված
Բազմաֆունկցիոնալ տեխնիկա	Շարժիչի հզորություն 75,3(55,4) ձ/ուժ(կՎտ), վառ. տարայի չափս 103,3լ, բարձում 1220կգ, շարժիչի աշխատանքային ծավալ 3339լս/սմ	Շարժիչի հզորությունը 37,3 կՎտ, բարձում 750 կգ (Ant-750):
Աղբատար ավտոմեքենա	Տարողություն 10լսմ, շարժիչի հզորություն 204(150.3) ձ/ուժ(կՎտ), ետևի բարձիչով	Շարժիչի հզորությունը 152 ձ/ուժ (MAZ 490143-390):

Ծաղկահովիտ

Անվանում	Պահանջվող	Տրամադրված
Աղբահան մեքենա	Հետևի բարձմամբ, թափքի ծավալը 10լսմ, անիվային բանաձև 4X2, շարժիչի հզորություն 240 ձ/ուժ	Շարժիչի հզորություն 225 ձ/ուժ (KAMAZ KO-456-12):
Ամենագնաց կիսաբեռնատար մեքենա	Շարժիչի ծավալ՝ 2.7 Լ, առավելագույն հզորություն 112 ձ/ուժ, անիվային բանաձև 4X4, 5 նստատեղ	4 նստատեղ (UAZ Combi):

Վարդենիս

Անվանում	Պահանջվող	Տրամադրված
----------	-----------	------------

Ամենագնաց կիսաբեռնատար մեքենա	Շարժիչի ծավալ՝ 2.7 Լ, առավելագույն հզորություն 112 ձ/ուժ, անիվային բանաձև 4X4, 5 նստատեղ	4 նստատեղ (UAZ Combi):
-------------------------------	--	------------------------

5.8. Տեխնիկան վարձույթով տրամադրելու պայմանները:

Տրամադրված մեքենասարքավորումները մասնավոր սեկտորին և անհատներին հասանելի դարձնելու նպատակով Ախուրյան, Ծաղկահովիտ, Վարդենիս և Տաշիր համայնքները վարձակալողի հետ կնքում են պայմանագրեր, որտեղ նկարագրվում է աշխատանքը, ժամաքանակը և դրան համապատասխան վարձակալության գումարը: Տեխնիկան շահագործում է միայն համայնքապետարանի կողմից նշանակված անձը: Մա թույլ է տալիս հավելյալ եկամուտներ մուտքագրել համայնքային բյուջե: Ախուրյան, Վարդենիս և Տաշիր համայնքները ավագանու որոշմամբ սահմանել են վարձակալության գնացուցակ: Ծաղկահովիտ համայնքում նման գնացուցակ չկա, և վարձավճարը որոշվում է ըստ պայմանավորվածության: Ծաղկահովիտ համայնքի ծրագրով նախատեսված միկրոավտոբուսները առայժմ չեն շահագործվում, հետևաբար բյուջետային մուտքերը դեռևս նախատեսվածից պակաս են:

Ինչ վերաբերում է Ապարան համայնքին, ապա որոշվել է ստացված մեքենասարքավորումները վարձակալության չտրամադրել՝ տեխնիկայի արագ խափանումներից խուսափելու համար:

5.9. Շահագործման ու պահպանման փաստացի ծախսերը:

Ստորև ներկայացված Աղյուսակ 22-ից պարզ է դառնում, որ առկա է զգալի տարբերություն տեխնիկայի պահպանման հետ կապված փաստացի ու կատարված ծախսերի միջև: Տարբերությունը առանձնապես մեծ է աշխատավարձի և վառելիքի տողերում:

Ուսումնասիրված հինգ ծրագրերից երեքում՝ (Ախուրյան, Ապարան և Ծաղկահովիտ) աշխատավարձերի փաստացի ծախսերը զգալիորեն թերակատարվել են: Լրացուցիչ հարցումների միջոցով պարզվել է, որ պատճառը նախատեսվածից ցածր աշխատավարձեր սահմանելն է (Ախուրյան), նախատեսվածից քիչ թվով աշխատակիցներ ներգրավելը (Ապարան և Ծաղկահովիտ): Վարդենիս համայնքում աշխատավարձի փաստացի ծախսերը շուրջ երկու անգամ գերակատարվել են: Ըստ նախաձեռնող խմբի, պատճառը համայնքի նախկին ղեկավարության կողմից նախատեսված աշխատավարձի ոչ ճիշտ հաշվարկն է: Տաշիր համայնքի նախատեսված և փաստացի ծախսերը աշխատավարձի մասով համարյա համընկնում են:

Ծախսային հաջորդ տողը, որտեղ առկա են նախատեսված ու փաստացի ծախսերի մեծ տարբերություններ վերաբերում է վառելիքին: Ախուրյան համայնքի ղեկավարի պնդմամբ՝ ներկայացված թվերի մեջ տեղի է ունեցել թվաբանական սխալ՝ 43,953,600 դրամի փոխարեն պետք է լինի 4,953,600, ինչը նշանակում է, որ նախատեսված և կատարված ծախսերի գերաձախսը շուրջ 700,000 դրամ է: Ապարան խոշորացված համայնքի դեպքում վառելիքի նախատեսված ու փաստացի կատարված ծախսի մեծ տարբերության (19,452,850 դրամ) պատճառը համայնքի ղեկավարությունը չկարողացավ բացատրել, ինչպես նաև համայնքին չի հաջողվել վարձել նոր մեքենաների շահագործման համար անհրաժեշտ թվով աշխատողներ: Ծաղկահովիտ համայնքին տրամադրված տեխնիկայի վառելիքի համար ծախսված գումարը նախատեսվածից պակաս է շուրջ 10 անգամ: Պատճառը՝ 2020 –ին համավարակով պայմանավորված միջհամայնքային երթևեկության համար նախատեսված միկրոավտոբուսների աշխատանքների սահմանափակումն է: Վարդենիսում վառելիքի ծախսերի մեծ անհամապատասխանությունը բացատրում են օրվա ղեկավարության կողմից կատարված ոչ պատշաճ հաշվարկներով: Իսկ Տաշիր համայնքի

նախատեսած ծախսերի մեջ ներառվել է նաև շարժիչի յուղի ծախսը: Բացի այդ, երկու միավոր տեխնիկա վարձակալությամբ է տրվել այլ անձանց, ովքեր և հոգացել են դրանց վառելիքի ծախսը:

Աղյուսակ 23. Տեխնիկայի պահպանման փաստացի ծախսերը 2020թվականին

Ախուրյան

Ծախսերի նկարագրությունը	Նախատեսված	Կատարված
Աշխատավարձ	16,560,000	9, 918, 000
Կոմունալ ծառայություններ	240,000	240, 000
Նյութեր, սարքեր, գործիքներ	250,000	530, 000
Վառելիք	43,953,600	4, 252, 795
Ընթացիկ վերանորոգում	1,000,000	1, 020, 000
Այլ ծախսեր (ներառյալ կայանատեղի պահպանման և շահագործման ծախսեր)	300,000	300, 000
Ընդամենը	62,303,600	16, 260 870

Ապարան

Ծախսերի նկարագրությունը	Նախատեսված	Կատարված
Աշխատավարձ	11,760,000	9,600,000
Կոմունալ ծառայություններ	-	-
Նյութեր, սարքեր, գործիքներ	1,200,000	1,208,000
Վառելիք	25,918,400	6,465,550
Ընթացիկ վերանորոգում	360,000	360,000
Այլ ծախսեր (ներառյալ կայանատեղի պահպանման և շահագործման ծախսեր)	1,278,000	279,900
Ընդամենը	40,516,400	17,913,450

Ծաղկահովիտ

Ծախսերի նկարագրությունը	Նախատեսված	Կատարված
Աշխատավարձ	32,400,000	25, 700, 000
Կոմունալ ծառայություններ	-	-
Նյութեր, սարքեր, գործիքներ	1,300,000	1, 772, 000
Վառելիք	51,134,400	5, 300, 000
Ընթացիկ վերանորոգում	1,040,000	1, 050, 000
Այլ ծախսեր (ներառյալ կայանատեղի պահպանման և շահագործման ծախսեր)	790,000	800, 000
Ընդամենը	86,664,400	34, 622 000

Վարդենիս

Ծախսերի նկարագրությունը	Նախատեսված	Կատարված
Աշխատավարձ	4,800,000	9,360,000
Կոմունալ ծառայություններ	145,000	145,000
Նյութեր, սարքեր, գործիքներ	1,340,000	4,900,000
Վառելիք	56,686,660	12,256,500
Ընթացիկ վերանորոգում	1,145,000	1,145,000
Այլ ծախսեր (ներառյալ կայանատեղի պահպանման և շահագործման ծախսեր)	344,000	5,500,000
Ընդամենը	64,460,660	33,306,000

Տաշիր

Ծախսերի նկարագրությունը	Նախատեսված	Կատարված
Աշխատավարձ	9,714,000	9,962,500
Կոմունալ ծառայություններ	310,000	310,000
Նյութեր, սարքեր, գործիքներ	1,650,000	2,000,000
Վառելիք	15,000,000	7,200,000
Ընթացիկ վերանորոգում	450,000	590,000
Այլ ծախսեր (ներառյալ կայանատեղի պահպանման և շահագործման ծախսեր)	330,000	410,000
Ընդամենը	26,454,000	20,472,500

III. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Եզրակացություններ

- Ուսումնասիրության արդյունքում ՀՏԶ-ի ՄԼՏԶ Ծրագրի Բաղադրիչ 1-ի շրջանակում իրականացված ենթակառուցվածքների վերակառուցման կամ վերանորոգման ծրագրերը համայնքների կողմից գնահատվել են որպես հույժ կարևոր, առաջնահերթ նշանակություն ունեցող և համայնքային կյանքի վրա դրական մեծ ազդեցություն թողած ներդրումներ: Բոլոր ծրագրերը համապատասխանում են համայնքների ներկայացրած առաջարկներին և համարյա բոլորը լավագույնս ծառայում են իրենց նպատակին:
- Ենթակառուցվածքների շինարարական աշխատանքները հիմնականում իրականացվել են լավ որակով: 20 ծրագրերից 14-ը կամ 70%-ը գնահատվել են լավ կամ գերազանց շինաշխատանքների որակի մասով:
- Դիտարկված թերությունների պատճառները հիմնականում օգտագործված նյութերի և մասամբ աշխատանքի ոչ պատշաճ որակն է, ինչպես նաև անբավարար տեխնիկությունը:

- Ծրագրերի մեծամասնությունում որոշ մտահոգություն է առաջացնում ավարտման ժամկետների երկարաձգման հարցը՝ հիմնականում ձմեռային պայմանների, նախագծային փոփոխությունների, չնախատված աշխատանքների, ինչպես նաև կապալառուի թերանալու պատճառով:
- Համայնքները հիմնականում ցուցաբերում են բարձր պատասխանատվություն և հոգատարություն վերակառուցված ենթակառուցվածքների պատշաճ պահպանումն ու շահագործումն իրականացնելու համար: Դիտարկված համայնքներում իրականացված ծրագրերի 45% պահպանումը գնահատվել է գերազանց:
- Բաղադրիչ 2-ի ներքո համայնքներին տրված մեքենասարքավորումները հսկայական նշանակություն ունեն համայնքների կոմունալ և այլ ծառայությունները միավորված համայնքների տարբեր բնակավայրերի բնակչությանը հասանելի դարձնելու, ծառայության որակը բարձրացնելու համար: Տրամադրված տեխնիկայի շնորհիվ համայնքներում ստեղծվել են նոր աշխատատեղեր, նախադրյալներ են ստեղծվել տնտեսական ակտիվությունը խթանելու համար:

Առաջարկներ

Շինաշխատանքների որակի շարունակական բարելավման և հետագա պահպանությունն ու շահագործումն արդյունավետ իրականացնելու համար առաջարկվում է հետևյալը.

Առաջարկներ նախագծերի որակի բարելավման և ժամկետների պահպանման ուղղությամբ

- Մշակել տուգանքներ կիրառելու մեխանիզմներ անբարեխիղճ նախագծային աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ՝ աշխատանքի սահմանված որակը և ժամկետները չպահովելու համար: Կրկնվող բացասական կատարողական ցուցանիշներ ունեցող կազմակերպություններին զրկել որոշակի ժամկետով ՀՏՁՀ-ի մրցույթներին մասնակցելու իրավունքից՝ նախապես նրանց տեղեկացնելով այդ մասին:
- Նախագծերում ներառել նախատեսվող սարքերի ու պատրաստվածքների (ՄԴՖ-ից դռների, բռնակների, լուսամուտների, ջրի ծորակների, ներկերի, փականների, ճկախողովակների, զուգարանակոնքերի բաքերի, այլ) տեխնիկական բնութագրեր և որակական պահանջներ, որոնք պետք է արտացոլվեն նաև նախագծման առաջադրանքում: Նախահաշվում, ի թիվս այլումինե դռների և լուսամուտների տեխնիկական պահանջների, ավելացնել նաև շրջանակներում տեղադրվող մետաղական պրոֆիլներին տեխնիկական պահանջները (1.2 մմ):
- Նախագծող ընկերություններից պահանջել առավել բարձր ճշգրտություն ծավալների հաշվարկի ժամանակ:
- Հետևողական լինել տեխպայմանների տրամադրման և նախագծերի մշակման ժամկետները և դրանց փոփոխությունները փաստաթղթավորելու հարցում:

Առաջարկներ տեխնիկոլոգիայի որակի բարելավման ուղղությամբ

- Մշակել տուգանքներ կիրառելու մեխանիզմներ անբարեխիղճ տեխնիկոլոգիական աշխատանքներ իրականացնող կազմակերպությունների նկատմամբ՝ աշխատանքի սահմանված որակը և ժամկետները չպահովելու համար: Կրկնվող բացասական կատարողական ցուցանիշներ ունեցող կազմակերպություններին զրկել որոշակի ժամկետով ՀՏՁՀ-ի մրցույթներին մասնակցելու իրավունքից՝ նախապես նրանց տեղեկացնելով այդ մասին:

- Առաջարկել տեխնոկոդություն իրականացնող ընկերություններին սահմանափակել նույն ժամանակամիջոցում մեկ տեխնիկիչին տրվող առաջադրանքների քանակը՝ կախված օբյեկտների ծավալից ու աշխարհագրական բաշխվածությունից:
- Առավել ուշադրություն դարձնել շինարարությունում աշխատող տեխնիկական աշխատակազմի որակավորման վրա:
- Մերտացնել ՀՏՁՀ ինժեների ու տեխնիկիչի համագործակցությունը:

Առաջարկներ շինաշխատանքների որակի բարելավման և ժամկետների պահպանման ուղղությամբ

- Կրկնվող բացասական կատարողական ցուցանիշներ ունեցող շինարարական կազմակերպություններին զրկել որոշակի ժամկետով ՀՏՁՀ-ի մրցույթներին մասնակցելու իրավունքից՝ նախապես նրանց տեղեկացնելով այդ մասին:
- Կազմել և մրցութային փաթեթի մեջ ներառել շիննյութերի/պատրաստվածքների ցանկ, որոնք պետք է գրավոր համաձայնեցնել պատվիրատուի հետ:
- Երկարացնել երաշխիքային ժամկետը:
- Շինարարության ժամկետներն առավել իրատեսական դարձնելու նպատակով Աշխատանքային գրաֆիկից բացի, բարդ և նորակառույց օբյեկտների համար պատրաստել Աշխատանքների իրականացման նախագիծ (ՈՒՍՍ), որտեղ հաշվի կառնվի նաև ձմեռային սեզոնում աշխատանքի ընթացքը:
- Ջրամատակարարման ծրագրերում ներառել ջրաչափերի տեղադրման պահանջ:
- Սահմանել ՀՏՁՀ վերահսկող ինժեներներին հանձնարարված ծրագրերի քանակ՝ մինչև 6-7 օբյեկտ՝ կապված ծրագրի բարդությունից և աշխարհագրական բաշխվածությունից:

Առաջարկներ ենթակառուցվածքների պահպանման բարելավման ուղղությամբ

- Երաշխիքային ժամկետի ավարտից հետո, կապալառուի վերջնական վճարումը իրականացնել ՀՏՁՀ-ի ինժեների կողմից դրական եզրակացության դեպքում:
- Շահագործումն ու պահպանումն արդյունավետ դարձնելու համար դպրոցների շենքերի ներքին հարդարման մեջ դիտարկել պատերի որակյալ լվացվող ներկրի կիրառումը:
- Հատկապես խոշոր համայնքներին առաջարկել վերակառուցված մանկապարտեզներին հատկացնել տնտեսվարի հաստիք՝ ընթացիկ մանր խնդիրների կուտակում թույլ չտալու համար:

Առաջարկներ նախահաշիվների, միավոր գնի բազայի վերաբերյալ

- Նախահաշվային բազայի մեջ ներառել նոր աշխատանքային տողեր, որոնք գործող նորմերով նախատեսված չեն, ինչպես նաև որոշ ճշգրտումներ մտցնել նորմերով նախատեսված տողերում, եթե դրանք չեն համապատասխանում հիմնադրամի պահանջներին:
- ՀՏՁՀ-ի բազայում և նախահաշիվների կազմման կարգում նյութերի և սարքավորումների նկատմամբ կիրառել նույն տոկոսներն ու գործակիցները: Ներկայումս, ըստ գործող կարգի, սարքավորումների նկատմամբ որոշ տոկոսներ (վերադիր ծախսեր, շահույթ և այլն) չեն կիրառվում:
- Ցանկալի է ավելի հաճախ թարմացնել բազայի տվյալները, տեղեկագրերից բացի ավելի խորը ուսումնասիրելով նաև շուկան և վերանայել նյութերի, աշխատավարձերի և սարքավորումների գները, որոնք ակնհայտ ճիշտ չեն:

- Նախահաշիվների գլուխների հերթականությունը համապատասխանեցնել ընդունված ձևին՝ ներքին աշխատանքներ – շինարարական, սանտեխնիկական, էլեկտրատեխնիկական, թույլ հոսանք, ինչից հետո արտաքին ուղիներ և բարեկարգման աշխատանքներ:

Առաջարկներ տրամադրված տեխնիկայի պահպանման բարելավման ուղղությամբ

- Տեխնիկայի տրամադրման պայման սահմանել փակ կայանատեղերի առկայությունը համայնքում:
- Անցկացնել պարտադիր (առնվազն մեկօրյա) վերապատրաստում նոր տեխնիկայի սպասարկմանը ներգրավված անձանց համար:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բաղադրիչ 2-ի ներքո ուսումնասիրված ծրագրերի տվյալներ

Մարզ	Համայնք	Անվանում և տրամադրված տեխնիկայի ցուցակ	Կոդ
1.	Արագածոտն	Ապարան Ապարան խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների, աղբահանության և ճանապարհների սպասարկմանն ուղղված ծրագիր. 1 միավոր էքսկավատոր 1 միավոր գրեյդեր 1 միավոր բազմաֆունկցիոնալ տեխնիկա 1 միավոր աղբատար ավտոմեքենա (հետևի բարձիչով) 10 խմ 2 միավոր աղբատար ավտոմեքենա (կողային բարձիչով) 7,5 խմ 1 միավոր կիսաբեռնատար ամենագնաց տեխսոցնության մեքենա Սարքավորումներ՝ էլեկտրագեներատոր 10կվտ հզորությամբ /եռաֆազ/ և զոդող սարքավորում հզորությամբ /եռաֆազ/ և զոդող սարքավորում	W-03
2.	Շիրակ	Ախուրյան Ախուրյան խոշորացված համայնքի տնտեսական միջավայրի բարելավում՝ տեխնիկական վերազինման և ծառայությունների բարելավման միջոցով. 1 միավոր էքսկավատոր 1 միավոր գրեյդեր 1 միավոր աղբատար ավտոմեքենա - կողային բարձմամբ (12 -11 խ/մ) 1 միավոր ինքնաթափ բեռնատար մեքենա 65115(15 տ.) 1 միավոր ինքնաթափ բեռնատար մեքենա (4.5տ) 100 հատ աղբամաններ (երկայթյա, փոշեպատ, 0.6 խ/մ)	W-11
3.	Գեղարքունիք	Վարդենիս Վարդենիս խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում և ճանապարհների որակյալ սպասարկում՝ տեխնիկական վերազինման միջոցով. 1 միավոր էքսկավատոր 1 միավոր գրեյդեր 2 միավոր ինքնաթափ մեքենա (15 տոննա) 1 միավոր բազմաֆունկցիոնալ հատուկ տեխնիկա - մինի ամբարձիչ հարակից գործիքներով 1 միավոր ամենագնաց կիսաբեռնատար տեխսոցնության մեքենա	W-08

			Սարքավորումներ՝ Դրենաժային պոմպ, զոդող ապարատ, շարժական էլեկտրակայան, պերֆորատոր	
4.	Արագածոտն	Ծաղկահովիտ	<p>Ծաղկահովիտ խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների բարելավման, ճանապարհների սպասարկման, ջրամատակարարման և ջրահեռացման ապահովման և հասարակական տրանսպորտային համակարգի ձևավորմանն ուղղված ծրագիր.</p> <p>1 միավոր էքսկավատոր 1 միավոր գրեյդեր 1 միավոր աղբահան մեքենա հետևի բարձմամբ 1 միավոր կոյուղի մաքրող մեքենա 1 միավոր ինքնաթափ 13 տ 1 միավոր տեխսպասարկման կիսաբեռնատար մեքենա 5 սարքավորումներ՝ եռակցող ապարատ /գեներատորով/, բալկարկա, եռակցող սարքավորում, բենզասղոց և հետահար մուրճ 2 միավոր միկրոավտոբուս 4X4 (12+1 տեղ)</p>	W-01
5.	Լոռի	Տաշիր	<p>Տաշիր խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների բարելավում, ճանապարհների սպասարկում.</p> <p>1 միավոր էքսկավատոր -հիդրոմուրճով 1 միավոր գրեյդեր 1 միավոր ինքնաթափ մեքենա (15 տոննա) 1 միավոր աղբատար ավտոմեքենա ետևի բարձմամբ 40 հատ պլաստիկ աղբամաններ -770լ 1 միավոր մինի բարձիչ 1 միավոր Խոզանակ բունկերով (մինի բարձիչի համար) մայթեզրային խոզանակով և ցողման համակարգով</p>	W-13

ՀԱՎԵԼՎԱԾ 2 Ուղեշարեր

ՈՒՂԵՇԱՐ 1

Մոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակներում իրականացված միկրոծրագրերի գնահատման համար

Մույն հետազոտությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Համաշխարհային բանկի վարկային միջոցներով իրականացվող Մոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակներում: Այն նպատակ ունի գնահատել ծրագրի շրջանակներում իրականացված միկրոծրագրերի շինարարական աշխատանքների որակը, ծախսերը, ենթակառուցվածքները և հիմնադրամի ենթածրագրերով համայնքներին տրամադրված տեխնիկայի պահպանումը:

Հետազոտությունն իրականացվում է Ուրբան հիմնադրամի կողմից՝ ընտրանքում ներառված ծրագրերի համայնքներում: Արդյունքները ամփոփվելու են և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին են ներկայացվելու ընդհանրական ձևով: Ձեր թույլտվությամբ մեր հարցազրույցը կձայնագրվի՝ ստացած տեղեկատվությունը ճշգրիտ վերարտադրելու և մշակելու նպատակով: Եթե դեմ չեք, ձեր անունը կնշվի վերլուծության հղումներում, սակայն, եթե որևէ կարծիք արտահայտելիս կգերադասեք անանուն մնալ, խնդրում ենք կանխավ զգուշացնեք այդ մասին:

1. Հարցվողի կարգավիճակը (ՏԻՄ ներկայացուցիչ, շահառու կառույցի ներկայացուցիչ, նախաձեռնող խմբի անդամ, համայնքի բնակիչ (օգտվող)՝ մանրամասնել)
2. Ի՞նչ դեր եք ունեցել ծրագրում:
3. Ձեր կարծիքով, որքանո՞վ է իրականացված ծրագիրը համապատասխանում համայնքի ներկայացրած առաջարկին (1-բոլորովին չի համապատասխանում, 4-ամբողջությամբ համապատասխանում է): Արդյոք ի՞նչ փոփոխություններ են եղել իրականացման պայմաններում, ժամկետներում, ծավալում: Եթե տեղյակ եք, խնդրում ենք նշել փոփոխության պատճառները:
4. Ինչպիսի՞ մասնակցություն է ունեցել համայնքային նախաձեռնող խումբը/ծրագրի իրականացման կոմիտեն ծրագրի իրականացման հսկման գործընթացում: Խնդրում ենք մեկնաբանել: Ծրագրի իրականացման ընթացքում հսկողության ի՞նչ հնարավորություններ եք ունեցել՝ որպես . . . (Հարց 1-ում նշված կարգավիճակը):
5. Որքանո՞վ եք գոհ ստացած արդյունքից: Խնդրում ենք գնահատել հետևյալ ցուցանիշները 1-4 սանդղակով՝ կատարված աշխատանքի որակը, կատարման ժամկետները, համապատասխանությունը համայնքի կարիքներին: Մեկնաբանեք ձեր գնահատականը (ի՞նչ թերություններ կան, ի՞նչն եք դրական համարում, ինչո՞ւ):
6. Ինչպե՞ս է շահագործվում ստեղծված ենթակառուցվածքը: Ի՞նչ խնդիրներ են ի հայտ եկել ենթակառուցվածքը համայնքին հանձնելուց ի վեր: Այդ խնդիրները որ՞ փուլից են գալիս՝ նախագծման,

շինարարության, թե՛ շահագործման: Նշեք առավել ակնառու խնդիրները: Ի՞նչ է արվել այդ խնդիրները լուծելու ուղղությամբ:

7. Ինչպե՞ս կգնահատեք ծրագրի արդյունքների պահպանումը (1-անբավարար, 4-գերազանց): Ծրագրի արդյունքների պահպանման ընթացքում ի՞նչ մասնակցություն ունի համայնքը: Ի՞նչ պետք է արվի պահպանման գործընթացը բարելավելու համար:

8. Ըստ Ձեզ, որքանո՞վ են առկա/տրամադրված միջոցները բավարար վերականգնված ենթակառուցվածքի պատշաճ պահպանման և շահագործման համար: Ձեր կարծիքով համայնքը ունի՞ համապատասխան մասնագետներ՝ պատշաճ շահագործումն ապահովելու համար:

9. Արդյոք ի՞նչ փոխվեց համայնքի կյանքում՝ ծրագրի շնորհիվ: Խնդրում ենք մանրամասնել:

10. Ընդհանուր առաջարկություններ և լրացումներ:

Մասնավոր հարցեր

Մանկապարտեզ, դպրոց, երաժշտական դպրոց

1. Որքանո՞վ եք գոհ հաստատության ներկա պայմաններից: Ի՞նչ խնդիրներ եք նկատել կառուցման/վերակառուցման գործընթացում: Իսկ ի՞նչ խնդիրներ են խանգարում շենքի գերազանց պահպանմանը/շահագործմանը: Ի՞նչ առաջարկներ ունեք դրանց լուծման ուղղությամբ:

2. Ծրագիրը որքանո՞վ է նպաստել երեխաների ընդգրկմանը նախա/արտադպրոցական հաստատություններում:

Խմելու/ ոռոգման համակարգեր

1. Ո՞վ է տնօրինում խմելու/ոռոգման ջրի մատակարարման ցանցը համայնքում, ովքե՞ր են դրա շահագործման և պահպանման պատասխանատուները

2. Որքանո՞վ եք գոհ ներկա ջրամատակարարման գրաֆիկից ու ջրի որակից: Արդյո՞ք ներկայում ջրամատակարարումը կատարվում է այնպես, ինչպես նախատեսված էր ծրագրի հայտում և նախագծում:

3. Ի՞նչ դեր է ունեցել ծրագիրը համայնքի առողջապահական/բնապահպանական իրավիճակի բարելավման գործում: Ի՞նչ առաջարկներ ունեք:

Մշակութային հաստատություններ (տուն-թանգարան, համայնքային կենտրոն)

1. Որքանո՞վ եք գոհ հաստատության ներկա պայմաններից: Ի՞նչ խնդիրներ եք նկատել կառուցման/տնօրգման ընթացքում: Իսկ ի՞նչ խնդիրներ են խանգարում շենքի գերազանց պահպանմանը/շահագործմանը:

2. Ի՞նչ դեր է ունեցել ծրագիրը համայնքի մշակութային կյանքի զարգացման գործում: Ի՞նչ առաջարկներ ունեք:

ՈՒՂԵՇԱՐ 2

Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակներում իրականացված ենթածրագրերի շահագրգիռ կողմերի համար

Սույն հետազոտությունն իրականացվում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Համաշխարհային բանկի վարկային միջոցներով իրականացվող Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակներում: Այն նպատակ ունի գնահատել ծրագրի շրջանակներում իրականացված միկրոծրագրերի շինարարական աշխատանքների որակը, ծախսերը, ենթակառուցվածքները և հիմնադրամի ենթածրագրերով համայնքներին տրամադրված տեխնիկայի պահպանումը:

Հետազոտությունն իրականացվում է Ուրբան հիմնադրամի կողմից՝ ընտրանքում ներառված ծրագրերի համայնքներում: Արդյունքները ամփոփվելու են և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին են ներկայացվելու ընդհանրական ձևով: Ձեր թույլտվությամբ մեր հարցազրույցը կձայնագրվի՝ ստացած տեղեկատվությունը ճշգրիտ վերարտադրելու և մշակելու նպատակով: Եթե դեմ չեք, ձեր անունը կնշվի վերլուծության հղումներում, սակայն եթե որևէ կարծիք արտահայտելիս կգերադասեք անանուն մնալ, խնդրում ենք կանխավ զգուշացնեք այդ մասին:

1. Հարցվողի կարգավիճակը (ՏԻՄ ներկայացուցիչ, շահառու կառույցի ներկայացուցիչ, նախաձեռնող խմբի անդամ, համայնքի բնակիչ (օգտվող)՝ մանրամասնել)
2. Ի՞նչ դեր էք ունեցել ծրագրում:
3. Ձեր կարծիքով, ինչպիսի՞ մասնակցություն է ունեցել համայնքային նախաձեռնող խումբը ծրագրի մշակման գործընթացում: Խնդրում ենք գնահատել 1-4 սանդղակով, որից 1-ը՝ որևէ մասնակցություն չի ունեցել, 4-ը՝ լիարժեք մասնակցություն է ունեցել: Խնդրում ենք մեկնաբանել: Ի՞նչ քննարկումներ են իրականացվել, ինչպե՞ս է ընդունվել վերջնական որոշումը:
4. Որքանո՞վ է իրականացված ծրագիրը համապատասխանում համայնքի ներկայացրած առաջարկին (1-բոլորովին չի համապատասխանում, 4-ամբողջությամբ համապատասխանում է): Արդյոք ի՞նչ փոփոխություններ են եղել իրականացման պայմաններում, ժամկետներում, ծավալում: Եթե տեղյակ եք, խնդրում ենք նշել փոփոխության պատճառները:
5. Ինչպիսի՞ մասնակցություն է ունեցել համայնքային նախաձեռնող խումբը /ծրագրի իրականացման կոմիտեն ծրագրի հսկման գործընթացում: Խնդրում ենք գնահատել 1-4 սանդղակով, որից 1-ը՝ որևէ մասնակցություն չի ունեցել, 4-ը՝ լիարժեք մասնակցություն է ունեցել: Խնդրում ենք մեկնաբանել:

6. Ի՞նչ նպատակներով է շահագործվում ձեռք բերված տեխնիկան: Շահագործման համար ի՞նչ ցուցումներ են սահմանված, որտե՞ղ: Որքանո՞վ են այդ ցուցումները պահպանվում: Իսկ ո՞ր դեպքերում դրանք չեն պահպանվում:
7. Ովքե՞ր են շահագործում տեխնիկան: Ի՞նչ որակավորում ունեն նրանք: Արդյո՞ք շահագործելու համար որակավորման որևէ պահանջ սահմանված է: Իսկ եղե՞լ են դեպքեր, երբ տեխնիկան շահագործվել է համապատասխան որակավորում չունեցող անձի կողմից:
8. Ինչպե՞ս կգնահատեք տեխնիկայի պահպանման պայմանները (1-անբավարար, 4-գերազանց): Ինչպե՞ս է ապահովված անվտանգությունը: Ի՞նչ պետք է արվի՝ պահպանումը բարելավելու համար:
9. Մասնավոր անձանց կողմից տեխնիկայի վարձակալության ի՞նչ հնարավորություններ կան: Արդյոք կա՞ գրավոր ձևակերպված գնացուցակ, վարձակալության կարգ:
10. Ի՞նչ խնդիրներ կամ խափանումներ են եղել տեխնիկայի հետ կապված՝ այն համայնքին հանձնելուց ի վեր: Ո՞րն է եղել դրանց պատճառը: Ի՞նչ է արվել այդ խնդիրները լուծելու կամ խափանումը վերացնելու ուղղությամբ: Իրականացվե՞լ է արդյոք երաշխիքային սպասարկում:
11. Ընդհանուր առաջարկություններ և լրացումներ: